Գիտություն

ՓԵՏՐՎԱՐ
№3 (167)
2004թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



21-րդ դարում մարդիկ կապրեն «ափսեներում»

Ավագ սերնդի մեր ընթերցողները (իսկ նրանք շատ են Ակադեմիայում), դիտելով այս լուսանկարը, կասեն՝ «Գիտությունը» ուշանում է, մենք այս նկարը տեսել ենք անցյալ դարի 60-ական թվականներին: Եվ նրանք չեն սխալվի: 60-ականներին, երբ տիեզերական թեման առաջնային էր, և մամուլը ողողված էր թռչող ափսեների մասին պատմություններով, մամուլում թռչող ափսեի նմանությամբ տներ ու թաղամասեր կառուցելու առաջարկներ եղան: Հետո թեման մատնվեց մոռացության: Բայց սեպտեմբերի 11-ին ամերիկյան ողբերգությունից հետո, «թռչող բնակարանների ու թաղամասերի» թեման նորից դարձավ հրատապ: Չէ՞ որ այսպիսի թաղամասերը անվտանգ են ահաբեկիչ ռմբարկուներից պաշտպանվելու համար: ⇨ 5

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՀԱՏՈՐՅԱԿ

Հայ ժողովուրդը պատմիչների, պատմաբանների, պատմագետների պակաս երբեք չի ունեցել: Չկա գիտության մի բնագավառ, որ այնքան դոկտորներ, թեկնածուներ ու գիտության մշակներ ունենա, որքան պատմագիտությունը: Եվ, սակայն, հազարամյակներն անցնում են, գալիս են գիտնականների նոր սերունդներ, բայց մենք՝ գենետիկորեն պատմաբանների ազգը չունի իր լիարժեք պատմագրությունը: Ահա թե ինչու հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի հրատարակության ծրագիրը ողջունելի է և վերաբերում է բոլորին: Այդ էր պատճառը, որ նախագահության նիստում այդ հարցի քննարկումը (զեկուցող՝ ակադեմիկոս Վ. Բարխուդարյան) առաջացրեց մտքերի շահագրգիռ քննարկում: Խոսեցին նիստի համարյա բոլոր մասնակիցները: Հայաստանի կառավարության հովանավորությամբ լույս տեսնող առաջին չորս հատորյակի աշխատանքներն արդեն սկսված են:

Քննարկման մասնակիցներին հետաքրքրում էր ամեն ինչ. բովանդակությունը, կարևոր փուլերի ընդգրկումը, մեկնաբանությունները... Հայաստանը և աշխարհը, հարևան ժողովուրդները: Հայտնի է, որ մեր ժողովուրդը մեր իսկ պատմությունը գիտի ավելի շատ պատմավեպերի միջոցով, քան պատմագրության: Էլ չենք խոսում օտարների մասին, նրանք առհասարակ մեր ժողովրդի պատմությունը չգիտեն, քանզի չկան, կամ համարյա չկան, մեր պատմության գիտական հրատարակություններ օտար լեզուներով: Ու թեև խմբագրական կազմը որոշել է հրատարակվող պատմության մի քանի հատոր տպագրել օտար լեզուներով, այնուամենայնիվ, հայտնի չէ, թե երբ պետք է հրատարակվեն օտար լեզուներով հատորները, երբ պետք է հայ պատմագրությունը ստանա արտասահմանյան ուղեգիր:

Ողջունելով մեր ժողովրդի պատմության բազմահատորյակի ծրագիրը, ցանկանում ենք ոչ միայն հաջող երթ, այլև օտար լեզվով հրատարակության հարցի մոտալուտ լուծում:

Ակադեմիայի նախագահությունը հանձնարարեց այդ գործը տնօրինող հանձնաժողովին մոտ ժամանակներում հստակեցնել անելիքներն ու ծրագրերը և չհապաղել այդ խիստ կարևոր գործի կենսագործման հարցում:



Cette zone très sèche est le site où la sonde américaine *Mars Pathfinder* a atterri en juillet 1997. La première mètre du sous-sol ne contient que 3% d'eau.

Մարսի ընդերքում՝ սառցե ծով

Ձեր ուշադրությանը ներկայացվող լուսանկարը Մարսի ընդերքի ջրային քարտեզն է՝ զրոյից մինչև 1,5 մետր խորության վրա:

Քարտեզը կազմվել է 687 օրվա դիտարկումների արդյունքում: Ամռանը կիսագնդերում սառույցը գոլորշիանում է: Ըստ այդ դիտարկումների, Կարմիր մոլորակի բևեռներում ջրի պարունակությունը հասնում է մինչև 60 տոկոսի: Բավական ջուր կա նաև հասարակածային գոտում:

Ի տարբերություն ամերիկյան «Օփորթունիտի» և «Սպիրիտ» սարքերի, որոնք իջեցված են Մարսի ջրառատ տարածքում, Բրիտանական «Բիգլ-2» սարքը նախատեսված է իջեցնել մոլորակի ամենաչոր մասում:

***

Իսկ այս լուսանկարում պատկերված մակերևույթը չափազանց չոր այն վայրն է, որտեղ 1997 թվականին վայրէջք է կատարել ամերիկյան զոնդը: Սարքի հաշվարկներով ընդերքի առաջին իսկ մետրը պարունակում է 3 տոկոս ջուր:

Տես 2-րդ էջ



Mars Ճանապարհը տևեց 7 ամիս

Ամերիկյան «ՍՊԻՐԻՏ» Մարսագնացը դեպի մոլորակ արձակվեց 2003 թվականի հունիսի 10-ին: Նպատակն էր ոչ միայն ստանալ մոլորակի մակերևույթի գունավոր լուսանկարներ, այլև հետազոտել կյանքի գոյությունը Մարսի վրա, ուսումնասիրել կլիման և երկրաբանությունը: Դա Կարմիր մոլորակի ուսումնասիրության նոր փուլ է: Այն կարող է ոչ միայն նոր ենթադրությունների առիթ տալ, այլև ժխտել հներից շատ ենթադրություններ: Նշենք նաև, որ դեպի Մարս է թռչել «ՍՊԻՐԻՏԻ» երկվորյակը՝ «ՕՓՈՐԹՈՒՆԻՏԻ» զոնդը, այն արձակվել է 2003 թվականի հուլիսի 8-ին:

«ՍՊԻՐԻՏ» սարքը արդեն Մարսի ընդերքը ուսումնասիրելու համար հորատանցք է բացել և շարունակում է հետազոտել մարսյան մթնոլորտի քիմիական բաղադրությունը:

«ՍՊԻՐԻՏԸ» ԵՎ «ՕՓՈՐԹՈՒՆԻՏԻՆ»՝ ՄԱՐՍԻ ՎՐԱ

Ամերիկյան տիեզերանավը՝ «Սպիրիտ» ռոբոտային շարժագնացը, հավաքելով արագություն, մոտեցավ Մարսին և վայրէջք կատարեց մակերևույթին: Թռիչքը կառավարողները՝ գիտնականները, NASSA-ի պաշտոնյաներն ու տիեզերքի ուսումնասիրման վարչության աշխատակիցները քաջ գիտակցում էին, որ դեպի Մարս կազմակերպած առաքելությունները ավելի հաճախ ձախողվել են, քան հաջողվել: Չնայած Միացյալ Նահանգներին հաջողվել է երեք անգամ ապահով վայրէջք կատարել այնտեղ, մինչ 1999 թ. նրա վերջին փորձը անհաջող էր:



Այդ նույն տարում՝ 1999-ին, այդ մոլորակի վրա պտույտ կատարելու մեկ ուրիշ առաքելության փորձը ձախողվեց սխալների պատճառով:

Միայն այս տարվա Սբ. Ծնունդի նախօրյակին, Բրիտանական ԲԻԳԼ-2-ը փորձեց վայրէջք կատարել, որի մասին առայժմ ոչինչ հայտնի չէ, քանի որ, հավանաբար, այն ձախողվել է: Սակայն «ՍՊԻՐԻՏԸ» ընթանում էր իր կուրսով և աշխատում էր անխափան, որի շնորհիվ այն վայրէջք կատարեց մոլորակի վրա:

Երկրաբանները կարծում են, որ վաղ շրջանում, հնագույն ավազանում, երբ մոլորակի ջերմությունը ավելի բարձր է եղել և խոնավ, այնտեղ գոյություն է ունեցել մի լիճ և հավանաբար կյանքի որոշ ձևեր:

Ակնկալվում է, որ վեցանիվային 400 ֆունտ կշիռ ունեցող ռոբոտը, որը «ճամփորդելու է» մոլորակի վրա առնվազն 90 օր, ապացույցներ կհաղորդի, որ ինչ-որ ժամանակ ջուր է եղել Մարսի վրա:

«Սա մի չափազանց բարդ առաքելություն է,- նշեց Կորնուելի համալսարանի մարսագնացի աշխատանքների գլխավոր պատասխանատու Սթիվեն Սքյուերսը: Նա ավելացրեց, որ քամու մի փչոց, մի սուր քար (ապառ) կարող է ճակատագրական լինել իրենց համար: Այդ է պատճառը, որ NASSA-ն օգտվել է այն հանգամանքից, որ Մարսը երկրին ամենամոտ գտնվող մոլորակն է և այսօր 2 տիեզերանավ ունի իր տրամադրության տակ՝ «ՍՊԻՐԻՏ» և «ՕՓՈՐԹՈՒՆԻՏԻ» անունով: Թռիչքի ընթացքում պլանավորված է, որ 800 մլն արժողությամբ 2 տիեզերանավերը ապարներում և նստվածքներում պետք է փնտրեն Մարսի վրա հեղուկ ջրի առկայության ապացույցներ, որ գոյություն են ունեցել անցյալում: Չորացած գետերի և էռոզիայի բազմաթիվ նշաններ խրախուսում են այդ աշխատանքները: Աստղակենսաբանները ենթադրում են, որ եթե մի տեղ առկա է, կամ գոյություն է ունեցել ջուր, կարող է գոյություն ունենալ կյանք:

Հիմնավորելով Մարսի վրա ընթացող ներկա հետազոտությունները, տիեզերքի հետազոտության գծով NASSA-ի ղեկավարի տեղակալ էդ. Վեյլերը ասաց, որ Մարսը ամենամոտ և լավագույն տեղն է կյանքի հետքեր փնտրելու համար: Ջուրը ամենաանհրաժեշտ տարրն է կյանքի համար. մենք գիտենք, որ Մարսի վրա ջուր կա, և որ անցյալում այնտեղ շատ ջուր է եղել և ավելացրեց.

- Սակայն երկրաբանները ընդգծեցին, որ «ՍՊԻՐԻՏԸ» և «ՕՓՈՐԹՈՒՆԻՏԻՆ» ապահովված չեն սարքավորումներով, որպեսզի փնտրեն կենդանի կամ կայացած օրգանիզմներ Մարսի վրա:

«ՍՊԻՐԻՏԻ» թռիչքը սկսվել է հունիսին Քանավերալ հրվանդանից (Ֆլորիդայի նահանգ) և այն ապահովված է լուսանկարչական ապարատներով, 2 սպեկտրոմետրով՝ ապառները և հողը անալիզի ենթարկելու համար և մի ռոբոտաձեռքով՝ փորելու և նմուշներ վերցնելու համար: Վայրէջք կատարելուց հետո Մարսագնացը գունավոր նկարահանումներ կատարեց իր շրջապատում: Այն աշխատում է կոմպյուտերում տեղադրված հրամանների միջոցով: Ռոբոտի ջերմային վահանակի հետ ունեցած մթնոլորտային շփումները դանդաղեցրին նրա վայրէջքը: Պարաշյուտը բացվեց և օդապարկերը լցվեցին օդով, որն ապահովեց փափուկ վայրէջքը: Թռիչքը կառավարողները, ակնկալում էին, որ հավանաբար ռոբոտը վեր կցատկի չորս հարկանի շենքի բարձրության չափով, այնուհետև թավալգլոր անցնելով մի մղոնի չափ կանգ կառնի: Թռիչքը կառավարողները մի քանի անհանգիստ րոպեներ անցկացրին սպասելով «ՍՊԻՐԻՏԻՑ» 2 ռադիոազդանշանի: Նրանք ընդունում էին, որ գոյություն ունի միայն 40 տոկոս հնարավորություն, որ կլսեն որևէ բան անմիջապես: Բայց քանի որ երկրագունդը գտնվում էր Մարսյան երկնքում Ջուսևյան խառնարանից վերև, անհանգստությունը ավելորդ էր:

«ՍՊԻՐԻՏԸ» վայրէջք կատարեց նշված վայրում և շարունակում է իր հետազոտությունները, այժմ արդեն իր «գործընկերոջ»՝ «Օփորթունիտի» հետ: Մարսյան գործընթացը շարունակվում է...

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Տպագիր խոսքի նկատմամբ հասարակության հետաքրքրության անկումն աղետալի չափեր է ընդունում: Նմանօրինակ ահազանգն այսօր կարելի է լսել յուրաքանչյուր քայլափոխի: Երևույթի բացատրության համար հնչում են զանազան մեկնաբանություններ, փնտրում են պատճառներն ու հիմնավորումները: Եվ քանի դեռ չեն գտնվել լուծումները (քանի որ, ըստ էության, ակնհայտ բացատրություններ որոնելու անհրաժեշտություն էլ չկա), ապա ստիպված են լինում բավարարվել ստեղծված կացությունը արձանագրելու պարզ գործողությամբ: Մենք դադարել ենք ընթերցասեր ժողովուրդ լինել:

Ի՞նչ կարդացինք ձմռանը

Տխուր վիճակագրությունը վկայում է, որ մայրաքաղաքի քիչ թե շատ հայտնի գրախանութներից յուրաքանչյուրում մեկ ամսվա ընթացքում շուրջ 2,5-3 միլիոն դրամի գրականություն է վաճառվում: Նման ցուցանիշն իր ծավալներով կարելի կլինի նույնացնել քաղաքի որևէ ծայրամասում գործող ամենահամեստ վաճառակետի ապրանքաշրջանառության հետ, մի բան, ինչն արդեն իսկ հարված է «Ոչ միայն հացիվ» ազնիվ կարգախոսին: Իսկ եթե ասենք նաև, որ այդ ծավալներում գեղարվեստական գրականության բաժինը ոչ ավել, ոչ պակաս՝ 0,1 տոկոս է կազմում, ապա պատկերն էլ ավելի անմխիթարական կդառնա սեփական մշակույթով հպարտացող երկրի համար: Սակայն, ինչպիսին էլ լինեն չոր թվերը, դրանց ետևում կոնկրետ գրքեր են, հեղինակներ, գրական ներկա ու անցյալ ժառանգությունը: Այս առումով ցանկացած տեղաշարժ հաջողություն է որևէ գրողի կյանքում, յուրաքանչյուր նահանջ պարտության պես մի բան: Ինչպիսի՞ն է իրավիճակը գրքի երևանյան շուկայում, վերջին օրերին ովքե՞ր են եղել առավել հաջողակները:

Այս դիրքերից մի հպանցիկ դիտարկում կատարելու մեր փորձը սահմանափակել էինք էլ ավելի համեստ ժամանակի կտրվածքով: Հարցն այսպիսին էր. ի՞նչ են կարդացել մեր հայրենակիցները այս տարվա երկու ամիսների ընթացքում և ո՞ր գրքերն են արժանացել նրանց շեշտված ուշադրությանը: Եվ քանի որ մայրաքաղաքի գրախանութների ցանցն այսօր այնպես ընդգրկուն չէ, ինչպես նախկինում, ապա նախապատվությունը տրվել էր առավել հայտնի վաճառասրահներին: Առանց բացառության, բոլոր գրատներում պատկերը միանման էր: Մարդիկ այստեղ են հաճախում գերազանցապես ուսումնական ձեռնարկներ, շտեմարաններ, զանազան տեղեկատուներ, նեղմասնագիտական գրականություն ձեռք բերելու մտադրությամբ: Նման համայնապատկերում գեղարվեստական գրքերի հանդեպ ուշադրությունը կարող է պարզապես աչք շոյել: «Նոյան տապան» գրատան ներկայացուցիչ Հայկ Մկրտչյանի դիտարկումներով այս տարի մեծ պահանջարկ են վայելել Հովիկ Չարխչյանի «Սուլամիթա. Սևակի մեծ սերը», Լեռնիկ Մելքոնյանի «Մարդկային ճակատագրեր» գրքերը, Թումանյանի հեքիաթները, «Դասականների այբուբեն» ռուսերեն մատենաշարը, Պաուլո Կորելոի ստեղծագործությունները և այլն:

«Անի» գրատան հայկական բաժնի վարիչ Ալվարդ Հովհաննիսյանի համոզմամբ, որևէ գրքի նկատմամբ ընթերցողների հետաքրքրությունը մեծ չափով կարող է պայմանավորված լինել նաև լավ կազմակերպված գովազդով:

- Այս վերջին շրջանում բոլորի հետաքրքրությունը շարժեց Սևակի սիրո մասին գիրքը, անպպասելի աշխուժություն մտցրեց: Գովազդն այդ դեպքում իսկապես կարևոր դերակատարություն ունեցավ: Աբովյան փողոցի վրա գտնվող «Ավասա» գրատանն առանձնապես չեն սիրում դժգոհել ընթերցողների հաճախումներից: Գրախանութը վաղուց ունի իր մշտական այցելուները և գիտի վերջիններիս նախասիրությունների հիմնական շրջանակը: Ինչպես մեզ հայտնեց գրատան աշխատակից Սեդա Հովհաննիսյանը, մեծ պահանջարկ են վայելում նախադպրոցական տարիքի երեխաներին հասցեագրված գրքերը, ուսումնական ձեռնարկները: Մեր հարցումին, թե վերջին մեկ ամսվա ընթացքում հատկապես ո՞ր ստեղծագործություններն են առավել ուշադրության արժանացել, տիկին Հովհաննիսյանը ևս առաջինը հիշատակեց Չարխչյանի «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» գիրքը:

Լեռնիկ Մելքոնյանի հեղինակած գիրքն այստեղ նույնպես լավագույնների շարքում է: Իսկ տեղի աշխատակիցներն իրենց անփոփոխ դեղատոմսն ունեն բոլոր դեպքերի համար:

- Գիրքը կգտնի իր ընթերցողին, եթե այն արժեքավոր է: Իսկ եթե գինն էլ փոքր-ինչ մատչելի լինի, գնողունակությունն ավելի կաճի:

«Նորք» գրատունը ներկայացնող տիկին Կարինեն այն կարծիքին է, որ գրքի հաջողության մասին կարելի է խոսել միայն որոշակի խմբաքանակի վաճառքի դեպքում: Բայց և չզլացավ եղածներից առանձնացնել Հ. Չարխչյանի «Սուլամիթան», Լ. Մելքոնյանի «Մարդկային ճակատագրերը», Ա. Ասլանյանի «Սայաթ Նովա» մենագրությունը՝ վերջինի դեպքում նաև ավելացնելով, որ գիրքն ավելի շատ թերթում են, քան գնում, քանի որ չափազանց թանկ արժե:

Աննշան տարբերությամբ, այս նույն պատկերին կարելի է ականատես լինել քաղաքով մեկ տարածված գրավաճառների փողոցային առևտրում: Հնարավորությունները տարբեր են, սակայն նույնն է արդյունքը:

Իհարկե, միշտ չէ, որ մեծաքանակ վաճառքը լավագույն վկայությունն է դառնում որևէ ստեղծագործության գեղարվեստական արժանիքների: Մյուս կողմից դժվար պիտի լինի հաշվի չառնել ընթերցողների խստապահանջ ճաշակը, ինչից էլ ծնվում է նորին գերազանցություն հասարակական կարծիքը: Ի վերջո, կարելի է նաև սխալվել ընտրության մեկ-երկու դեպքերում, սակայն անհնար է վրիպումը դարձնել համընդհանուր:

Եվ եթե կասկածից վեր է, որ մարդկանց համար գիրք գնելն այսօր թանկ հաճույքն է դարձել, ապա մյուս կողմից թերևս ժամանակն է նաև ձեռքը դնել սրտին ու խոստովանել, որ լավ ընթերցող պահանջելուց առաջ նախ անհրաժեշտ է լավ գրքեր գրել:

Արա ՀԱԿՈԲՅԱՆ



■ Ժամանակին ստրեպտոմիցին դեղամիջոցը, որի բաղադրության հիմքը բնական աճեցրած անտիբիոտիկներն են, այսօր էլ չի կորցրել իր կիրառման նշանակությունը, քանի որ պենիցիլինի և ստրեպտոմիցինի հայտնագործությունից հետո, սկսվեց անտիբիոտիկ դեղամիջոցների զանգվածային արտադրությունը: Ահա այսպիսի տեսք ունի կենսաբանական դեղամիջոցների բջիջների հարստացման խոշորոցված պատկերը:

■ Իսկ ահա այս չինացին ևս զբաղվում է կենսաբանական խնդիրներով: Միայն թե այս բլրակները աճեցրած բջիջներ չեն, այլ իր քրտինքով աճեցրած բրնձի բերքն է, որ հորդ անձրևների պատճառով չի կարող հավաքել և սեղմված ջրից կորզում, փրկում է բրնձահատիկները և սպասում, թե երբ պետք է կտրվի անձրևն ու չորանա հավաքած բերքը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Քննարկումներ, առաջարկներ, վերլուծություններ

Բյուրականի աստղադիտարան. նորից առանց տնօրենի

Հերթական անգամ չհաջողվեց ընտրել Աստղադիտարանի տնօրեն: Իսկ նախապատմությունն այսպիսին է. է. Խաչիկյանի հեռանալուց հետո հայտարարված մրցույթը ոչ մի արդյունքի չհանգեցրեց, և ՀՀ ԳԱԱ պրեզիդենտի հրամանով տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Ենգիբարյանը: Վերջինիս պաշտոնավարության ժամկետը լրանալուց հետո հարկավոր էր կատարել ընտրություն: Սակայն այս անգամ ևս Բյուրականի աստղադիտարանի աշխատակազմը չեկավ վերջնական եզրակացության և ցանկություն հայտնեց ունենալ տնօրեն իրեն իսկ կազմից: ՀՀ ԳԱԱ նախագահության որոշմամբ այս անգամ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց Աստղադիտարանի ավագ գիտաշխատող Հայկ Հարությունյանը:

Լրատվական ծառայություն

Հաճելի լուր Մոսկվայից

Օրերս Մոսկվայից «Գիտական ընկերակցություն» բարեգործական հիմնադրամից հաճելի լուր ստացվեց: «Գիտական ընկերակցություն» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ներկայացմամբ ՀՀ ԳԱԱ Մնջոյանի անգան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը պարգևատրվել է «Գիտությանը բերած ավանդի և միջազգային գիտական համագործակցության համար» ոսկե մեդալով:

Հիմնադրամի վարչությունը միաժամանակ որոշում է ընդունել Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիան, հիմնադրման 60-ամյա հոբելյանի առթիվ, պարգևատրել «Համաշխարհային գիտությանը բերած ավանդի և միջազգային գիտական համագործակցության համար» ոսկե հուշամեդալով:

Այս մասին նամակով հայտնել է «Գիտական ընկերակցություն» բարեգործական հիմնադրամի վարչության նախագահ, քիմիական գիտությունների դոկտոր Վ. Գ. Կարցևը:

Խորանում է Հայաստանի ինտեգրացումը եվրոպական գիտական տարածքում

Հայաստանը խորացնում է միջազգային գիտական համագործակցությունը Գիտությունների ակադեմիաների միջազգային ընկերակցության (ԳԱՄԸ) շրջանակում: Այս մասին հայտարարեց Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը, ԳԱԱ Նախագահության դեկտեմբերի 10-ի նիստում ամփոփելով ԳԱՄԸ ստեղծման 10-ամյակի կապակցությամբ Կիևում կայացած հոբելյանական նիստի արդյունքները:

Հայաստանից կիևյան հանդիպմանը մասնակցել է նաև ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը:

Ինչպես նշվեց, հատուկ ուշադրություն է հատկացվել միջազգային համագործակցությանը և համաեվրոպական գիտական տարածքում ԱՊՀ երկրների գիտնականների ինտեգրացմանը: Այդ ինտեգրացմանը պետք է խթանի ԳԱՄԸ նոր կարգավիճակը իբրև ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ճանաչված միջազգային գիտական կազմակերպություն:

Այդ առումով Ֆադեյ Սարգսյանը ուշադրություն դարձրեց Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի (Դուբնա, Ռուսաստան) հետ աշխատող հայ ֆիզիկոսների հետազոտությունների, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի բնագավառի հետազոտությունների վրա: Այսպես, հայ էներգետիկների նվաճումներով հետաքրքրվել են Կիևի էներգիայի ոչ ավանդական աղբյուրների ինստիտուտում:

Ինչպես նշեց Յուրի Շուքուրյանը, հատուկ ուշադրություն է հատկացվել այն հարցին, որպեսզի կատարելագործվեն ազգային ակադեմիաների ինտեգրացման մեխանիզմները և խորացվի փոխգործունեությունը ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ՝ գիտական ներուժը շահավետ օգտագործելու համար:

Երևանի ֆիզիկայի ինստիտուտը՝ 60 տարեկան

1943-2003... 60-ամյա երկար պատմություն, որն, ի ուրախություն մեր ժողովրդի, բեղմնավոր էր ու արդյունավետ, գոնե Հայաստանում գիտական օջախներ հիմնադրելու տեսակետից:

1943 թվականը, հիրավի, նշանակալից տարեթիվ է. այս թվականին էր, որ հիմնադրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան, այս նույն թվականին էր, որ Արտեմ Ալիխանյանի ջանքերով բացվեց Երևանի ֆիզիկայի ինստիտուտը: Եվ փաստորեն 2003-ն էլ, կամա թե ակամա, դարձավ հոբելյանական. մեծ շուքով նշվեց Գիտությունների ազգային ակադեմիայի հիմնադրման 60-ամյակը, ապա նաև Երևանի ֆիզիկայի ինստիտուտի 60-ամյակը: Ինչպես նշեց ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանը ֆիզիկայի ինստիտուտի 60-ամյակին նվիրված հոբելյանական նիստի ժամանակ՝ ստեղծվելով նույն տարում այս երկու գիտական հաստատությունները միշտ աշխատել են միասին ու համատեղ: Նա միաժամանակ նշեց, որ իրենք հպարտանում են նրանով, որ Հայաստանում գոյություն ունի նման գիտական կենտրոն, որի աշխատանքները չեն նվազել ոչ մի ժամանակաշրջանում: Եվ զարմանալին այն է, որ հենց պատերազմի թոհուբոհի տարիներին ստեղծվեցին Գիտությունների ակադեմիան ու ֆիզիկայի ինստիտուտը, իսկ դրանց անհրաժեշտությունն իսկապես կար: Ապա ակադեմիայի անունից շնորհավորելով ֆիզիկայի ինստիտուտի աշխատակազմին հոբելյանի առթիվ՝ Ֆ. Սարգսյանը որպես հուշանվեր մի գեղեցիկ նկար հանձնեց ինստիտուտին:

Երևանի ֆիզիկայի ինստիտուտին շնորհավորելու էին եկել նաև բազմաթիվ պաշտոնատար անձինք: ՀՀ Նախագահի ուղերձը կարդաց Կարեն Ճշմարիտյանը և մի քանի ակադեմիկոսների և դոկտորների հանձնեց կառավարության կողմից շնորհած պարգևները: ՀՀ վարչապետի շնորհակալագրով պարգևատրվեցին ինստիտուտի մի շարք աշխատակիցներ: Ինստիտուտի աշխատակազմին շնորհավորական խոսք ասաց կրթության և գիտության նախարար Սերգո Երիցյանը:

Նշենք նաև, որ ֆիզիկայի ինստիտուտը որոշում է ընդունել և դիմել է կառավարությանը՝ հաշվի առնելով Արտեմ Ալիխանյանի մեծ ավանդն ու ջանքերը ինստիտուտի հիմնադրման և կայացման գործում՝ Երևանի ֆիզիկայի ինստիտուտը կոչելու Արտեմ Ալիխանյանի անունով:

ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Լրաբերը» լույս տեսավ

Լույս է տեսել «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի 2003 թ. երկրորդ համարը: Ինչպես միշտ, այս անգամ էլ հանդեսի նյութերը ներկայացված են հոդվածներով, հաղորդումներով, հրապարակումներով, քննադատության և մատենախոսության, ինչպես նաև՝ գիտական լրատու բաժիններով:

«Լրաբեր»-ի այս համարում հիմնականում ընդգրկված են հայոց պատմության և առհասարակ հասարակագիտության նոր և արդիական շրջանները:

Համահեղինակային աշխատություն

Հայ գաղթաշխարհի պատմության (միջնադարից մինչև 1920 թ.) եռահատորյակի երկրորդ հատորի հրատարակիչը ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտն է: Այն համահեղինակային աշխատություն է, որն ըստ բաժինների շարադրել են Վ. Միքայելյանը («Երկու խոսք», «Կիպրոս»), Վ. Միքայելյանը և Հ. Թոփուզյանը («Եգիպտոս», «Սիրիա-Միջագետք-Լիբանան»), Հ. Բարթիկյանը («Բյուզանդիա»), Ա. Խառատյանը («Զմյուռնիա»), Հ. Մարտիրոսյանը («Իրան»), Ա. Խառատյանը և Վ. Ղուկասյանը («Կոստանդնուպոլիս»), Ռ. Աբրահամյանը («Աֆղանստան», «Հնդկաստան», «Եթովպիա», «Չինաստան», «Հարավ-արևելյան Ասիա») և Վ. Գրիգորյանը («Միջին Ասիա»):

Հատորը շարադրված է տարածաշրջանային սկզբունքով: Տրվում է հայկական գաղութների ամբողջական պատմությունը՝ դրանց սկզբնավորումից մինչև 1920 թ. յուրաքանչյուր գաղթավայրի անցած պատմական ուղու ամբողջական պատկերը:

«Մեղու» հանդես. մատենագիտություն

Լույս է տեսել «Մեղու» հանդեսի (1856-1865) մատենագիտությունը, որը կազմել և խմբագրել է Ալբերտ Խառատյանը: Մատենագիտությունը կազմված է ժամանակագրական սկզբունքով և հիմնականում ծանոթագրված է: Հեղինակը վերականգնել է հանդեսի բազմաթիվ հոդվածների անստորագիր հեղինակների անունները, մասնավորապես՝ «Մեղվի» խմբագիր Հ. Սըվաճյանի գրչին պատկանող հոդվածները, որոնց գերակշիռ մեծամասնությունը անստորագիր է:

Մատենագիտությունն ունի անվանացանկ (հեղինակներ, անձնանուններ, թարգմանիչներ, տեղանուններ) և առարկայական-թեմատիկ ցանկ (դպրոցներ, պարբերական մամուլ, ընկերություններ, ազգային-մշակութային հաստատություններ և այլն):

Մելիքե ՍԱՐԳՍՅԱՆ

Ռաֆայել ՂԱԶԱՐՅԱՆ - 80

Գիտությունների ազգային ակադեմիայում նախագահության նիստ էր: Առիթը բարի էր, տրամադրությունը՝ տոնական: Լրանում էր ակադեմիկոս, «Մաշտոց» ճարտարագիտական կենտրոնի տնօրեն, հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Ռաֆայել Ղազարյանի ծննդյան 80-ամյակը:

Հոբելյարին շնորհավորելու էին եկել ճանաչված գիտնականներ, հայտնի հասարակական-քաղաքական գործիչներ: Ռադիոֆիզիկայի բնագավառում գիտնականի գործունեությունը և գիտական նվաճումները բարձր գնահատեցին ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը, ակադեմիկոսներ Լ. Աղալովյանը, է. Ղազարյանը և այլոք:

Ռաֆայել Ղազարյանը հասարակական-քաղաքական կյանք մուտք գործեց 1988 թ. ղարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից, եղել է «Ղարաբաղ» կոմիտեի անդամ: Նրան՝ որպես քաղաքական գործիչի և ազնիվ մտավորականի, իրենց ելույթներում բարձր գնահատեցին Ա. Մանուչարյանը, Ա. Արշակյանը, Ա. Սարգսյանը, Տ. Թորոսյանը և ուրիշներ:

ՀՀ ԳԱԱ Լրատվական կենտրոն

«Լեզու և լեզվաբանություն»

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ջանքերով առաջին անգամ հայ իրականության մեջ լույս է տեսնում «Լեզու և լեզվաբանություն» (խմբագիր Վ. Համբարձումյան) գիտական պարբերականը: Սա միակ պարբերականն է, որ պարունակելու է միայն տեսական լեզվաբանական հոդվածներ: Հայոց լեզվի և հայերենագիտության հարցերը տարբեր ժամանակներում եղել են հայերեն և այլ լեզուներով լույս տեսնող գիտական պարբերականների մի մասը: Այսօր արդեն հասունացել է առանձին պարբերականի հրատարակման պահը, քանի որ մասնագետների հավաստմամբ, գնալով մեծանում է գիտական հետաքրքրությունը հայոց լեզվի նկատմամբ: Հայ լեզվաբանական մտքի ձեռքբերումները դառնում են անհրաժեշտ ուսումնասիրությունների և քննարկումների առարկա: Պարբերականի նպատակն է՝ անդրադառնալ առհասարակ լեզվի և լեզվաբանության առանցքային խնդիրների և հարցերի լուսաբանմանը: Ամսագրի խմբագրական կազմը ներկայացնում են ոչ միայն Լեզվի ինստիտուտի, այլև արտասահմանյան մի շարք երկրների հայերենագետ լեզվաբաններ:

Հանդեսն ունի «Հոդվածներ», «Հաղորդումներ և քննարկումներ», «Լեզվաբանական ձեռքբերումներ», «Գրախոսություններ», «Գրքերի տեսություն», «Հիշարժան տարեթվեր» բաժինները: Բարի՛ երթ գիտական նոր պարբերականին:

«Ծուղրութի ավետարանը» կգտնի՞ արդյոք, իր վերջին հանգրվանը

Տարիներ առաջ առիթ ունեցել ենք պատմել «Ծուղրութի Ավետարանի» մասին: Այդ եզակի ձեռագիրը, որը կարող էր մեր Մատենադարանի զարդերից մեկը լինել, գտնվում է Ծուղրութ գյուղում, բնակիչներից մեկի տանը: Ու թեև տան բնակիչներն ամեն ինչ անում են ձեռագիրը չվնասելու համար, բայց այդ հոյակապ գանձն ունի վերականգնման և մասնագիտական առավել ապահով բնակատեղի կարիք: Թեև մենք՝ հայերս, եզակի այն ժողովուրդներից ենք, որ հարուստ ենք հին ձեռագրերով, բայց և դրանցից յուրաքանչյուրի կորուստը ճակատագրական կարող է լինել: Չէ որ պատմության գեղծարարները ամեն ինչի պատրաստ են, միայն թե վնասեն մեր ժողովրդի հոգևոր կյանքն ու պատմությունը: Հիշում եմ, թիֆլիսյան գիտաժողովներից մեկում վրաց պատմաբանը «պաշտպանելով» ու «բարձր գնահատելով» հայ պատմությունը, ասաց.

- Հայերը պնդում են, թե 8-10-րդ դարերում Հայաստանի տարածքում աչքի ընկնող հուշարձաններ համարյա չեն ստեղծվել, դա սխալ կարծիք է: Հենց այդ դարերում ստեղծվել են այնպիսի կոթողներ, ինչպիսիք են Գայանեն, Հռիփսիմեն, Զվարթնոցը...

Արտաքուստ հայանպա՜ստ է այդ ելույթը, իսկ այն պարզապես մի քանի տասնյակ ու հարյուրավոր տարիներով կրճատում էր հայ հուշարձանների կենսագրությունը, դրանով, բնականաբար առաջնայինը համարելով վրացական համարյա նույնատիպ կառույցները: Ինչ ճակատագիր կսպասի «Ծուղրութի Ավետարանին»... Չգիտենք, բայց եթե մի օր իմանաք նրա անհայտացման մասին, չզարմանաք, քի՞չ են եղել մեր կորուստները, մեր անդառնալի կորուստները:

Կարծում ենք «Ծուղրութի Ավետարանի» տունդարձի համար քիչ են ջանքերը (բացի Մատենադարանից), ափսոսում են միջոցները, չեն դիմում վճռական ու արդյունավետ քայլերի: Իսկ առայժմ այդ եզակի ձեռագիրը հանգրվանում է Ախլցխայի շրջանի Ծուղրութ հայաբնակ գյուղում: Փա~ռք Աստծո... Առա՛յժմ...

Վ. Մ.

ԳԻՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ... ՀԱՅՏՆՎԵՑ ՓՈՂՈՑՈՒՄ

Առողջապահության նախարարության նախկին շենքի վաճառքի արդյունքում հանրապետական գիտաբժշկական գրադարանը, որ մինչ այդ տեղակայված էր նախարարության շենքում, հայտնվեց փողոցում: Նախարարության նոր շենքը շատ փոքր է անգամ աշխատողների համար, ուստի, ըստ աշխատողների՝ խոսք անգամ լինել չէր կարող գրադարանի մասին: Ապա որոշվեց, որ գրադարանը պետք է տեղավորվի Ազգային գրադարանի շենքում, բայց պարզվեց նաև, որ Ազգային գրադարանը պատրաստ է ընդունել միայն մոտ 500.000 կտոր գրականությունը, սակայն ոչ՝ գրադարանի մոտ 30 աշխատակիցներին: Եվ բնականաբար, վերջիններիս դա դուր չէր գալիս: Բնական էր նաև, որ գիտական հասարակությունն ուղղակի չէր կարող զուտ տեսնողի և լսողի կարգավիճակ որդեգրել: Գիտաբժշկական գրադարանի անօթևան մնալու փաստը զայրացրել և զարմացրել էր գիտնականներին: Այս թոհուբոհի մեջ էր, որ Գիտությունների ազգային ակադեմիան 2003 թ. օգոստոսի 27-ի նախագահության նիստում որոշեց դիմել Կառավարությանը՝ առողջապահության նախարարության ենթակայության «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպության լիազորությունները ԳԱԱ-ին վերապահելու պահանջով: Հայրենի կառավարությունն էլ նոյեմբերի 27-ին հաստատեց Ակադեմիայի պահանջը և փաստորեն առանց տանիք մնացած շուրջ 500.000 կտոր գրականությունն ու մոտ 30 աշխատակիցները վերջապես կարողացան հանգիստ շունչ քաշել: 2004 թ. հունվարի 21-ին էլ ՀՀ ԳԱԱ նախագահությունը հաստատեց իր կազմում ընդգրկված Հանրապետական գիտաբժշկական գրադարան ՊՈԱԿ-ի կանոնադրությունը: Ներկայումս «Հանրապետական գիտաբժշկական գրադարան» ՊՈԱԿ-ն տեղակայված է Երևանի Ռուբինյանց փողոցի 29-ը հասցեում և զբաղեցնում է 600 քառ. մետր մակերես:

Նարինե ՎԱՐԴԱՆՅԱՆ

Արբանյակային հետազոտումներ Սադամ Հուսեյնի նկատմամբ

Թե ամերիկյան և բրիտանական ղեկավարները ջանում են ապացուցել, թե Իրաքի նախագահ Սադամ Հուսեյնը միջուկային զենք, կամ, գոնե, ծրագրեր ունենալու ցանկություն ուներ. հրապարակված փաստերը վկայում են, որ նույն երկրները լրտեսական ծրագրեր էին կենսագործում Սադամի նկատմամբ: Այդ են վկայում նաև «Իմաջինգ Նոտես» հանդեսի հրապարակումները, որոնցից մեկը, «Սադամ Հուսեյնի հոգեկանը» խորագրով հոդվածը, ներկայացնում ենք ձեր ուշադրությանը:

Սադամի գործունեության հիմնական նպատակը ոչ թե սեփական ժողովրդի բարօրությունն էր, որը կարող էր և լինել բավականին բարձր, հաշվի առնելով նավթի անսպառ պաշարները, այլ սեփական անձի համբավը՝ անձնապաշտությունը, որը նրան դարձրեց միահեծան դիկտատոր:

90-ական թվականներից ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հատուկ ծառայությունները նկարահանումներ էին կատարում հին Բաբելոնի տարածքում և Հուսեյնի կողմից Բաբելոնում ստեղծած նոր կառույցները, որպեսզի գիտական հետազոտությունների և վերլուծությունների միջոցով կարողանային ձևավորել Սադամի հոգեկան պատկերը, ջանալով ներթափանցել նրա ներքնաշխարհը: Գիտնականների կարծիքով արբանյակային այդ նկարահանումները մեծապես օգնում էին հասկանալու Իրաքի տիրակալի մտքերը ու նպատակները, նրա փառասիրական նկրտումները: Այդ նկարահանումները նաև լայնորեն օգտագործվում էին պետական գործակալությունների և լրատվական կազմակերպությունների կողմից Հուսեյնի գաղտնիքները բացահատելու նպատակով: Նրանց մասնավորապես հետաքրքրում էին զանգվածային ոչնչացման զենքերը, որոնք ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների կարծիքով Հուսեյնը կարող էր արտադրել և պահեստավորել: Իրաքում արբանյակային նկարահանումներից ստացած տեղեկությունները պետք է օգտագործվեին Սադամին իշխանությունից հեռացնելու համար, հաշվի առնելով նաև այն դաժանությունները, որոնց զոհ գնացին հազարավոր մարդիկ, այդ թվում նաև մերձավորները, ներառյալ իր փեսան, որին դավաճանության մեջ կասկածելով աղաթքվի ավազանի մեջ ոչնչացրեց: Սադամի անձնական բժիշկը՝ հայտնի պլաստիկ վիրաբույժ և նշանավոր նկարիչ Բաշիրը պատմում է, որ Սադամին միանշանակ չի կարելի բնութագրել: Մեկ նա իբր բարի էր, բայց քիչ անց նա դառնում էր ամենադաժան դահիճը: Նրանից հետ չէին մնում նրա երկու որդիները, հատկապես Ուդեյը, որը անձամբ կարող էր գնդակահարել բարձրաստիճան զինվորականներին: Ուդեյը ցոփ ու շվայտ կյանք էր վարում և հազարավոր իրաքցի աղջիկների առնանգում ու դժբախտացնում: Նույն Բաշիրը պատմում է, որ Ուդեյը իր մանկլավիկների միջոցով իմանալով գալիք հարսանյաց հանդեսների մասին և եթե հարսնացուն գեղեցիկ էր լինում, ապա այդ աղջիկը առաջին գիշերը նրա հետ պետք է անցկացներ: Ահա թե ինչու որդիներին ոչնչացնելուց և Սադամին գերելուց հետո հազարավոր իրաքցիներ պահանջում էին, որպեսզի Սադամը կանգնի արդար դատարանի առաջ, այն դատարանի, որից երկար ժամանակ զրկված է եղել Իրաքի ժողովուրդը:

Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ արբանյակային նկարահանումների արդյունքները լայնորեն օգտագործվում էին նաև կոալիցիոն ուժերի կողմից Իրաքում ընթացող ռազմական գործողությունների ժամանակ: Հենց այդ նկարահանումները օգնեցին Սադամի որդիների թաքստոցի տեղը որոշելիս, նրանց ոչնչացնելու համար:

Սակայն այդ նկարահանումների ուշադրության բուն կենտրոնը միշտ եղել է Հուսեյնի կառուցած պալատները և հատկապես այն պալատները, որոնք գտնվում էին Բաղդադից հյուսիս կամ հենց Բաղդադում: Սադամի իշխանության տարիներին է կառուցվել շքեղ պալատային համալիրը, որը գտնվում էր Եփրատ գետի արևելյան ափին՝ Բաղդադից 50 մղոն հեռավորության վրա:

Գիտնականների կարծիքով արբանյակային նկարահանումների միջոցով ստացված Հուսեյնի պալատների մյուս կառուցապատումների և տեղանքի պատկերները ուսումնասիրելով կարելի է կազմել Հուսեյնի կերպարանքի ճիշտ պատկերը և ներթափանցել նրա հոգեկան աշխարհը, իսկ տեղանքի պատկերները օգտագործել ռազմական գործողությունների ժամանակ:

Հայտնի է, որ շուրջ 2 հազար տարի Բաբելոնը հանդիսացել է աշխարհի հնագույն և հզոր քաղաքներից մեկը: Այն առևտրական և ֆինանսական կենտրոն էր ողջ Միջագետքի համար, աշխարհագրական մի կետ, որ միացնում էր Արևելքը Միջերկրական ծովի երկրների, Եգիպտոսի և Պարսկաստանի հետ: Բաբելոնի քարոզիչներն ու հոգևորականները շրջելով աշխարհով մեկ տարածում էին իրենց մշակութային արժեքները:

Սակայն Բաբելոնի անկումից հետո, պարսկական տիրապետության ժամանակ (539 թ.մ.թ.ա.) քաղաքը աստիճանաբար անկում ապրեց, գնալով ընկղմվում էր ավազների մեջ և թվում էր, թե այն երբեք չի հառնի ավազների ջլուրների տակից: 1980-ին հին Բաբելոնի շրջակայքը փոշու և ավազի մեջ ծածկված ավերակների կույտ էր և միայն հին ու մերկ պարիսպներն էին կանգուն մնացել:

1979-ին Հուսեյնը տիրանալով իշխանությանը, անմիջապես ֆինանսական հատկացումներ տվեց Բաբելոնը վերականգնելու համար: Անցած 25 տարիների ընթացքում 60 մլն աղյուս է դրվել Նա- ⇨ 6

Գիտնականը հարց է բարձրացնում

Ծեղուխային ֆիլտրերի հրաշքը

Հանրահայտ է, որ բոլոր տեսակի բույսերը, այդ թվում նաև գյուղատնտեսական մշակաբույսերը, հողից սնվելու և աճի ընթացքում կլանում են Մենդելեևի աղյուսակի քիմիական տարրերի որոշակի քանակներ (հողի մեջ եղած դրանց պարունակություններին համեմատական կարգով): Հանրահայտ է նաև, որ այդ տարրերի զգալի մասը (որոշակի քանակներով) շատ կարևոր և անհրաժեշտ է մարդու (ինչպես նաև կենդանիների) օրգանիզմի համար: Այդպիսի տարրերից են, օրինակ, կալիումը, նատրիումը, կալցիումը, մագնեզիումը, պղինձը, երկաթը, ցինկը, քրոմը, վանադիումը, ֆոսֆորը, յոդը, ֆտորը և այլն: Թե որքան կարևոր են դրանք մարդու օրգանիզմի համար և ինչ դեր են կատարում, կիմանաք ստորև բերված նկարագրությունից: Եվ, այսպես, բժիշկները գտնում են, որ միկրոտարրերը «կյանքի մետաղներ» են կամ «ներքին սեկրեցիայի գեղձերի սնունդ», քանի որ դրանք «կենսական կարևոր գործընթացների կատալիզատորներ են»:

Հանքանյութերը կազմում են մարդու օրգանիզմի զանգվածի ընդամենը 4 տոկոսը, որի կես մասը գտնվում է օրգանիզմի ամուր (ոսկորների, ատամների, եղունգների, մազերի) և փափուկ հյուսվածքների մեջ, իսկ մյուս կեսը՝ արյան և միջհյուսվածքային հեղուկների: Մեր օրգանիզմի զանգվածի 70-80 % կազմված է ջրից, նրա մեջ լուծված ածխածնից և գազերից՝ ջրածնից, ազոտից և թթվածնից: Ընդ որում, դրանց գերակշիռ մասը՝ մոտ 60 %, կազմում է թթվածինը: Կալցիումի քանակը կազմում է մեր օրգանիզմի 1,5-2,2 %, ֆոսֆորինը՝ 0,8-0,2 %, իսկ մյուս միկրոտարրերինը՝ կալիումինը, ծծմբինը, նատրիումինը, մագնեզիումինը, քլորինը և այլն՝ տոկոսի հարյուրերորդական մասը: Այսպես,. երկաթի և մագնեզիումի քանակը մարդու օրգանիզմում կազմում է 0,0003 %, պղինձը՝ 0,00015 %, յոդինը՝ 0,00004 %: Մյուս տարրերի պարունակությունը՝ շատ աննշան է:

Այսօր գիտությանը հայտնի է, որ մեր օրգանիզմում առկա բոլոր միկրոտարրերից 25-ը կարևոր են մեր առողջության պահպանման համար, որոնցից 18-ը՝ շատ կարևոր, ուղղակի կենսական անհրաժեշտություն են: Հայտնի է նաև, որ ինչպես քարաղը, այնպես էլ ծովի ջրի գոլորշիացման արդյունքով ստացած աղը, իրենց մեջ պարունակում են մեր օրգանիզմը պահպանող միկրոտարրերից շատ-շատերը: Այն երկրներում, որտեղ բնակչությունը օգտագործում է քարաղ կամ ծովի ջրից ստացած աղ (Իսպանիա, Վենեսուելա, Ճապոնիա), մարդկանց, ինչպես նաև կենդանիների շրջանում շատ հազվադեպ են հանդիպում այնպիսի հիվանդություններ, որպիսիք են. ավշային համակարգի հիվանդությունները, վաղաժամ կարծրախտը (սկլերոզը) և ինֆարկտը: Այն ժողովուրդները, որոնք սնվում են ծովի մթերքներով և որպես սննդի համեմունք օգտագործում են ծովի աղը, տիրապետում են ավելի ամուր առողջության, քան նրանք, ովքեր «ծովի բարիքներից» չեն օգտվում:

Կերակրի աղ օգտագործելով՝ մարդն ամեն օր լրացնում է իր օրգանիզմին անհրաժեշտ նատրիումի և քլորի, իսկ ծովի աղ կամ քարաղ օգտագործելու դեպքում՝ նաև շատ այլ միկրոտարրերի պահանջը:

Դ. Ջարվիսը իր «Մեղրը և մյուս բնամթերքները» գրքում գրում է. «Մարդկային օրգանիզմի ստեղծման և վերաստեղծման, կենսական ակտիվ վիճակում նրա պահպանման և կյանքի ժամանակահատվածի երկարացման համար մեծ նշանակություն ունեն հանքային տարրերը»:

ԿԱԼԻՈՒՄԸ օրգանիզմին անհրաժեշտ է մեր բոլոր փափուկ հյուսվածքների նորմալ կենսագործունեության համար՝ մկանների, անոթների, մազանոթների, հատկապես սրտամկանների, լյարդի, երիկամների, ուղեղի հյուսվածքների, ներքին սեկրեցիայի գեղձերի և այլն: Ինչպես կալցիումն է անհրաժեշտ մեր ոսկորների, ատամների, եղունգների համար, այնպես էլ կալիումն է անհրաժեշտ մեր բոլոր փափուկ հյուսվածքների համար: Կալիումը մտնում է մեր միջհյուսվածքային հեղուկների բաղադրության մեջ (մեր օրգանիզմի բոլոր աղերի կեսից ավելին բաժին է ընկնում կալիումին):

Կալիումի աղերը նպաստում են օրգանիզմից ջրի ավելցուկի հեռացմանը, օգնում ուռուցքի վերացմանը: Կալիումը հակակարծրախտային տարր է:

(շարունակելի)

Հ. ԱՎԱԳՅԱՆ
Երկրահանքաբանական գիտությունների դոկտոր

ԱՄՈՍԵՆ...

Օզոնային լոգանք

Ամերիկացիները որոշել են տեխնոլոգիական հեղափոխության հնարավորությունները օգտագործել նաև... բանջարեղենը երկար պահելու համար: Հայտնի բան է. լոլիկը, վարունգը և այլ բոստանային կուլտուրաներ ժամանակի ընթացքում նեխում են և փչանում: Իսկ ի՞նչ է պետք դրանք երկարակյաց դարձնելու համար: Պարզվում է՝ օզոնային խցիկ: Մինչև ասելը, թե ինչ է իրենից ներկայացնում այդ սարքը, նախ պատասխանենք այն հարցին, թե ինչու՝ օզոն:

Բանն այն է, որ սույն գազը մահացու է ամեն տեսակի միկրոբների համար: Մինչդեռ մարդկանց համար բացարձակապես անվտանգ է և անգամ՝ օգտակար: Ինչպես հայտնի է, օզոնի մոլեկուլը կազմված է թթվածնի 3 ատոմից, ի տարբերություն սովորական թթվածնից, որի մոլեկուլը բաղկացած է այդպիսի 2 ատոմից: Օզոնը անկայուն գազ է, կամ այլ խոսքով ավելորդ, երրորդ ատոմը անընդհատ ձգտում է պոկվել և հեռանալ: Երբ ցանկացած մթերքը «շնչում է», «կուլ է տալիս» այդ օզոնը, նրա ներսում այդ երրորդ ատոմը, այնուամենայնիվ, պոկվում է մոլեկուլից և... միկրոբը պայթում է, ոչնչանում: Այդ բախտին արժանանում են հարևան նույնատիպ և ուրիշ միկրոբներ, բացարձակապես բոլորը: Հաստատելու համար այս ճշմարտությունը, բոլոր կանոններով փորձ կատարեցին. օզոնային խցիկի մեջ տեղավորեցին նեխած, հոտած, աղտոտ 20 կգ լոլիկ: Մի քանի վայրկյանով միացրին սարքը և անջատեցին: Հետազոտեցին փորձարկման դրված հոտած, փչացած լոլիկները: Պարզվեց, որ նեխման և այլ երևույթներ հրահրող միկրոբների 97 տոկոսը ոչնչացված է: Լոլիկները գրեթե ստերիլ են, և կարելի է ճաշակել: Անշուշտ, փոշին և կեղտը ոչ մի տեղ չեն կորել, սակայն արդեն մաքուր փոշի է և կեղտ՝ առանց միկրոբների, իսկ ուտելը՝ անվտանգ:

Բնական հարց է առաջանում՝ ինչո՞ւ դիմել այսպիսի միջոցների: Մի՞թե դժվար է պարզապես լվանալ այդ դժբախտ լոլիկները և ճաշակել: Իհարկե, կարելի է, սակայն ապացուցված է, որ օզոնով մշակված բանջարեղենը կարելի է ամիսներով պահել սառնարանում, և դրանք այլևս չեն փչանա: Բացի այդ, եթե բոստանային կուլտուրաները լվանում են, ցանկալի է, որ դրանք հետո սրբիչով չորացվեն: Իսկ օզոնի դեպքում դրա անհրաժեշտությունը չկա: Գնացիր շուկա, գնեցիր ինչ որ պետք է, բերիր տուն, մտցրիր օզոնային խցիկ, պահեցիր մի քանի վայրկյան և վերջ: Այնուհետև լցրու սառնարանը: Հետո կարող ես ամիսներով շուկա չգնալ՝ հանիր և կեր:

Սակայն չար լեզուները ասում են, որ անհանգիստ ամերիկացիները չեն հանգստանում: Նրանք մտածում են ստեղծել այնպիսի սարք, որը լոլիկը, բիբարը, վարունգն ու բադրիջանը կլվանա օզոնով հագեցված ջրով: Ասում են՝ այս պարագայում ամեն տեսակի միկրոբները կոչնչանան 100 տոկոսով, և դրանք սառնարանում կարելի կլինի պահել՝ որքան սիրտդ կամենա:

Բայց սառնարանում էլ կան միկրոբներ, որոնք այսպես թե այնպես կհայտնվեն օզոնացված բանջարեղենի վրա: Նշանակում է, սառնարանն էլ պետք է օզոնային մշակման ենթարկվի:

Հետո երևի թե հարկ կլինի օզոնային օճառով լվանալ ձեռքերը, օզոնային դեղահաբերով միկրոբազերծել աղեստամոքսային տրակտը և այլն, և այլն:

Օզոնային խցերը տեսքով նման են փոքրիկ լվացքի մեքենայի, հոսանք քիչ են ծախսում: Սակայն առայժմ բավական թանկ արժեն: Սակայն շատ ամերիկացիներ այնքան ծույլ են, որ պատրաստ են վճարել, միայն թե նեղություն չքաշեն և ոչինչ չլվանան...

21-րդ դարում մարդիկ կապրեն «ափսեներում»

⇨1 Թե ինչ բան է ֆիննական տնակը, գիտեն բոլորը: Տնակներ են, էլի՝ փայտե, հավաքովի... Բայց ոչ բոլոր ֆիննական տնակներն են այդպիսի: 1960-ականների վերջին Ֆինլանդիայից մի ճարտարապետ նախագծեց տնակներ... թռչող ափսեների տեսքով. տիեզերական ֆիննական տնակներ:

Հա՞րկ է, արդյոք, խոսել այն մասին, թե այն տարիներին մարդկությունն ինչպես էր տարված տիեզերքով, և որն այնպես հաջողությամբ սկսել էր նվաճել մարդկությունը:

Թվում էր, թե հենց այդ տարիներին վրա հասավ այն պահը, որ գուշակել էին ֆանտաստ գրողները:

Այդ «տիեզերական» նոր աշխարհին պետք է համապատասխաներ տառացիորեն ամեն ինչ: Փոխադրամիջոցները, կենցաղային տեխնիկան և բազում այլ բաներ սկսեցին ուրվապատկերվել հրթիռների տեսքով, իսկ մարդիկ մտովի պատկերացնում էին իրենց տիեզերական ուղևորների համազգեստով:

Հասկանալի է, որ նախագծերը չէին կարող նմանվել ուղղանկյուն տուփերի: Դարաշրջանին վայել տներ էին պետք: Եվ նրանք հայտնվեցին:

1968 թվականին ֆիննական ճարտարապետ Մատտի Սուուրոնենը իր դժվարահունչ ազգանունը հռչակեց «թռչող ափսեների» տեսքով տան ստեղծմամբ: Չվածև պատուհաններ, ինտերիերի պաճուճավոր, հոսուն ալիքաձև շերտեր, շրջանաձև տեսահորիզոն կամ տեսադաշտ և տիեզերանավի հատվածախուց հիշեցնող խոհանոց: Ի դեպ, կացարանի դուռն էլ օդանավասանդուղքի նման դուրս էր ընկնում:

Հեղինակն ուղղակի մարդկանց զգացմունքներին էր դիմում: Արտաքին ու ներքին հարդարանքը զուգորդումներ էին առաջացնում ոչ միայն հրթիռների, ուղղաթիռների և դիրիժաբլների հետ, այլև այլմոլորակային աստղանավերի հետ:

ՉԹՕ-ների դիտարկման բազմաթիվ հայտարարությունների, լուրերի ֆոնի վրա, այն ժամանակ շատերը չէին կասկածում այլմոլորակային քաղաքակրթության հետ մոտալուտ հանդիպմանը:

Սուուրոնենը չէր ձգտում տրամաբանել իր ստեղծագործական երևակայությունը: Նման տան հարմարավետությունն ու նպատակահարմարությունը, ի տարբերություն դասական կացարանների, վիճարկելի է: Օրինակ, վերցնենք կահույքը: Հո չենք կարող կլոր տան մեջ կաղնեփայտե զգեստապահարան դնել: Ուրեմն անհրաժեշտ կլիներ կահավորության բոլոր մասերը ստեղծել նորովի, ընդ որում դրա համար խոչընդոտներ չկային: Այն տարիներին «տիեզերական» լուծումների պակաս չէր զգացվում, նույնիսկ Ֆինլանդիայում:

Ի դեպ, սկզբում ճարտարապետն իր ստեղծագործական հիմնական միտքը՝ կոնցեպցիան, ոչ ոքի վզին չէր փաթաթում որպես բնակարանի նոր ձև, նա ենթադրում էր, որ կառույցը կարելի է օգտագործել որպես սպորտային, ասենք դահուկորդների համար տնակ, կամ դրա նման մի բան:

Այնուհետև նրա ծրագրերը փոփոխվեցին, և թռչող ափսեները ներկայացվեցին որպես իդեալական մերձքաղաքային տնակներ, ուր ոչ այնքան բազմանդամ ընտանիքները կարող են անցկացնել իրենց արձակուրդը կամ հանգստյան օրը:

Նախագիծը նորանոր մանրամասներ էր ձեռք բերում և ի վերջո արժանի անուն ստացավ՝ «Ֆուտուր»:

Ֆին երազողը շինանյութի ընտրության վրա համարյա չէր մտածում, դրանից ոչ շատ առաջ նա պլաստմասսայից կառուցեց Սեյնայոկիի հացահատիկային շտեմարանի 8 (ութ) մետրանոց տրամագծով գմբեթը:

Այսպես, ուրեմն, «ափսեն» տեղավորում էր 8 մարդ և ուներ 8 մետր տրամագիծ: Տնակի բարձրությունը 4 մետր էր, այն պատրաստեցին գործարանում և անսովոր թեթևության շնորհիվ կարելի էր տեղափոխել ուղղաթիռով: Ֆիննական գյուտարարը մտածում էր նույնիսկ «արագաշարժ բնակության» մասին: Ասենք՝ մի շաբաթ այստեղ, մի շաբաթ այնտեղ: Շրջահոս ձևերով տնակը, իր հենարան տոտիկներով, ըստ նրա կարծիքի, խիստ շահեկան կլիներ կուսական բնության գրկում:

Սակայն Սուուրոնենի վարդագույն երազանքները խորտակվեցին: 1973 թվականի նավթային ճգնաժամի հետևանքով պլաստմասսայի գները խիստ աճեցին և «Ֆուտուր»-ի արտադրությունը այլևս արդյունավետ ու շահավետ չէր կարող լինել:

Ենթադրվում է, որ ընդամենը նման 20 տնակ է կառուցվել, բայց եթե մի քիչ լավ փնտրենք, ապա կարելի է ողջ աշխարհում այսօր էլ 2 տասնյակից ավելի «Ֆուտուրներ» գտնել: Եվ յուրաքանչյուրը համարում են նշանավոր ճարտարապետի ստեղծագործությունը: Եվ ահա, պարզվում է, որ 35 տարի առաջ մարդկանց մեջ առաջացած զգացմունքները դեռևս չեն անհետացել:

Բայց Ֆինլանդիայում, ԱՄՆ-ում և Նիդեռլանդներում այդ արտասովոր ֆիննական տնակներից մի քանիսը պահպանվեցին: 2001 թվականին դրանցից մեկը ցուցադրվեց Սան-Դիեգոյում՝ ինտերնետ աճուրդում՝ 25 հազար ԱՄՆ դոլարի նախնական արժեքով: Նրա մյուս եղբայրակցի բախտը ավելի քիչ բերեց. 2003 թվականի գարնանը Նյու-Ջերսի նահանգում լուրեր տարածվեցին, իբր հայտնաբերվել են աղետի ենթարկված ՉԹՕ-ի բեկորները:

1970-ական թվականները սառը դատողության տարիներ էին 60-ականների ռոմանտիկական ֆանտազիաների համեմատությամբ: Սոումիի սահմաններից հեռու մարդիկ այդ տնակները ծառայեցրին որպես սրճարաններ, մոթելների հյուրանոց-համարներ, ցուցանմուշներ, նվերների խանութներ:

«Ֆուտուրը» հաջողությամբ էր արտահայտել իր ժամանակի օդային մթնոլորտը, ուստի և չմոռացվեց: 1998 թվականին Միկի Տաանիլան «Ֆուտուրայի» մասին վավերագրական ֆիլմ նկարահանեց, որը հաջողությամբ ցուցադրվեց միջազգային կինոփառատոներում:

Ներկայումս, երբ տիեզերական թեման նորից դարձել է հրատապ ու գործնական, ամերիկյան մամուլը սկսել է հիշել ու անդրադառնալ ֆին ճարտարապետների «թռչող ափսեներին», չէ՞ որ նման տնակը հիանալի ապաստան կլինի այլ մոլորակների վրա հանգրվանած արշավախմբերի համար:



Ինչպես արդեն հայտնի է, Ռուսաստանի Դաշնության կառավարությունը արգելել է ռուսական հացահատիկի արտահանումը ուրիշ երկրներ: Այդ որոշումը թելադրված է Ռուսաստանում հացի թանկացման փորձերը կանխելու բարի մտադրությամբ:

Սույն իրողությունը, անտարակույս, լուրջ դժվարություններ է ստեղծելու Հայաստանի համար: Այն պարզ պատճառով, որ մեր երկիր ներմուծվող հացահատիկի առնվազն երկու երրորդը բերվում է Ռուսաստանից:

Ասում են, որ մեր հացի պակասը լրացնելու համար մենք հիմա հարկադրված ենք լինելու հացահատիկ գնելու Ֆրանսիայից, Կանադայից, Ռումինիայից, Ղազախստանից և ուրիշ երկրներից: Ասում են նաև, որ սույն հանգամանքը կանդրադառնա հացահատիկի գների վրա: Անշուշտ, թանկացնելու առումով, քանի որ, ինչպես հայտնի է, Հայաստան կոչվող երկրում գները, որպես կանոն, միայն ու միայն բարձրանում են ու թանկանում:

Ստեղծված իրավիճակում երևի թե բացատրելի է հացահատիկի գների թանկացումը համաշխարհային շուկայում, ուրեմն՝ նաև մեզ մոտ:

Սակայն ի՞նչ բացատրություն տալ այն փաստին, որ ամիսներ առաջ հացի գները մեր երկրում շեշտակի բարձրացան, առանց որևէ միջազգային առիթի ու պատճառի, իսկ բարձր իշխանությունները մեզ վստահեցրին, թե դա ժամանակավոր բնույթ ունի: Հասկանալի է, սույն բացատրությունը լոկ միայն մարդկանց խաբելու համար էր: Ինչը որ ապացուցվեց հացի գների հետագա աճով: Իսկ հիմա արդեն գները կբարձրանան «շատ օբյեկտիվ» պատճառներով: Ըստ որում, այս մասին արդեն բարձրաձայն հայտարարվել է:

Ռուսաստանի Դաշնությունում հացի թանկացման առաջին իսկ փորձերը անմիջապես առաջ բերեց պետական այրերի վճռական միջամտությունը՝ այն կանխելու և թույլ չտալու համար: Իսկ մեզ մոտ բարքերը այլ են, մեզ մոտ բազարային օրենքները թույլ են տալիս, անգամ խրախուսում են, որ հացի ներկրման մենաշնորհը ձեռք գցած մաֆիոզ մի կլան, գների հետ վարվի ինչպես ուզում է: Եվ ինչո՞ւ միայն հացի: Գերշահույթ ստանալու համար մեր մեծահարուստները պատրաստ են հանել ժողովրդի վերջին շապիկը, խլել վերջին լուման, իսկ իշխանությունները, պետությունը, որոնք սահմանադրությամբ ժողովրդի անվտանգության երաշխավորն են, ոչինչ չեն ձեռնարկում, ավելին՝ ամեն ինչ կատարվում է նրանց գիտությամբ ու ջերմեռանդ հովանավորությամբ: Սույն երևույթից բխող ուղղակի հետևությունները թողնում ենք ձեզ, հարգելի ընթերցողներ:

Մեզ մնում է հավաստիացնել, որ ժողովրդին ոչ ոք այս գիշատիչ թալանից չի պաշտպանելու, որ որևէ ակնկալիք չունենան՝ փրկվելու այս «ժամանակավոր» համարվող պատուհասներից: Շուտով կթանկանան նաև էներգակիրների, ջրի սակագները, հացի հետ՝ նաև բոլոր-բոլոր ապրանքները, և ժողովրդի գլխին կկախվի «ինչպե՞ս ապրել» անլուծելի հարցականը:

Մինչդեռ Ազգային ժողովում, կառավարությունում, զանգվածային տեղեկատվության միջոցներում տարփողվում են Աղքատության վերացման մեր «փայլուն» ծրագրերը, որոնք պատկերացնո՞ւմ եք, «իրականանում են»:

Այնպես որ, հարգելի հայրենակիցներ, լայն բացե՛ք ձեր թշվառական գրպանները և պատրաստվե՛ք ձեր հետագա աղքատացման նոր փուլին: Ինչպես երևում է, Աղքատության վերացման կառավարության ծրագիրը մեր երկրում այլ կերպ են հասկանում, և այն հակառակ ընթացք ունի...

Թուրինյան պատանքի մասին մեր հրապարակումը խիստ հետաքրքրել է ընթերցողներին: Նրանք խնդրել են պատմել, թե որ քաղաքում կամ երկրում է գտնվում այդ պատանքը: Դե, քանզի այն կոչվում է Թուրինյան, ուրեմն Թուրին քաղաքում է, որը գտնվում է Հյուսիսային Իտալիայում: Ահա այդ քաղաքի կենտրոնական հրապարակը: Առաջին պլանում՝ Պո գետն է, որը քաղաքը բաժանում է երկու մասի:

Ամեռ է, ցուրտ. ինչպե՞ս ես ապրում դպրոցական

Հայաստանում գոյություն ունի մոտ 1400 դպրոց, որից մոտ 200-ը՝ Երևան քաղաքում: Դպրոցների ջեռուցման հարցերը դեռևս լուծված չեն: Ներկայումս, հատկապես Երևանում գտնվող դպրոցների դասասենյակները հիմնականում տաքացվում են էլեկտրական սալիկների միջոցով: Օրական 7-8 ժամ այդ սալիկներով տաքացնելու դեպքում հնարավոր չէ դասասենյակներում ապահովել բնականոն ջերմաստիճան: Բացի դրանից էլեկտրական էներգիայով դասասենյակների տաքացումը արդյունավետ լինել չի կարող. էներգիայի ծախսը մեծ է, ջերմաստիճանը՝ ցածր: Մինչև սենյակները տաքանում են, ավարտվում են պարապմունքները:

Ավելի ցածր է ուսման որակի աստիճանը: Պե՞տք է ապացուցել, որ ցրտից կուչ եկած երեխաներին գիտելիքներ հաղորդելը դյուրին չէ և անարդյունավետ է: Առավել ևս, որ ցրտից տառապում են ոչ միայն աշակերտները, այլև՝ ուսուցիչները: Ահա արդեն քանի տարի է ձմռանը երկարաձգվում են արձակուրդները, որն էլ վնաս է հասցնում ուսման ամբողջ ընթացքին:

Այսօր Երևանում կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերը՝ կաթսայատները չեն աշխատում: Երևանի ՋԷԿ-ից ջեռուցվում են մոտ 80 շենք Շենգավիթի և Էրեբունի համայնքներում: Սակայն այդ համայնքներում, նույնիսկ այդ տարածքներում գտնվող ոչ բոլոր դպրոցներն են ջեռուցում ստանում: Այս հարցը լուրջ անհանգստության տեղիք է տալիս: Համանման պատկեր էր նաև անցած տարիների ընթացքում: Երևանում 5 ջեռուցման կաթսայատների շահագործման պարագայում այդ կաթսայատների հարևանությամբ գտնվող շատ դպրոցներ ջեռուցում կստանան: Անհրաժեշտ է կազմել դպրոցների ջեռուցման հետ կապված հատուկ ծրագիր և փուլ առ փուլ այն իրականացնել: Հարցը լուրջ հետազոտման կարիք ունի:

Պետք է մշակել օրենսդրական դաշտ այս հարցերը կանոնակարգելու համար: Հակառակ պարագայում վաղը կհայտնվենք էլ ավելի դժվարին խնդիրներ լուծելու ճանապարհին:

Եթե դպրոցական շենքը կանոնավոր չի ջեռուցվում, ապա շինարարական կառուցվածքները ժամանակի ընթացքում ավելի շուտ են շարքից դուրս գալիս: Հետագայում էլ ավելի միջոցներ կպահանջվեն այն վերականգնելու համար: Չպետք է մոռանանք նաև, որ մեր հանրապետությունն աղքատ է վառելիքաէներգետիկ պաշարներով, այն բերում ենք դրսից, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ և խութեր: Բացի դրանից գազի համաշխարհային պաշարները մարդկությանը կբավարարեն մոտ 60 տարի, նավթինը՝ 40, կոշտ վառելիքինը՝ 220 տարի: Ուստի գնալով թանկանալու են վառելիքի գները միջազգային շուկայում: Մեզ մնում է գիտականորեն հիմնավորել օգտագործվող էներգիայի յուրաքանչյուր միավոր: Ըստ որում, պետք է հաշվի առնել վառելիքի ծավալը, արժեքը, էկոլոգիապես մաքուրը, ջերմային հատկանիշները: Ցավն այն է, որ այսօր, ջերմային ճգնաժամի տասնամյակից հետո էլ չկա հանրապետությունում դպրոցական շենքերի ջեռուցման որևէ ծրագիր, հայեցակետ, մարտավարություն: Ստացվում է, որ մենք աչքներս փակում ենք պրոբլեմի առաջ ու մտածում՝ «սիրելի մանկավարժներ և աշակերտներ, մի քիչ էլ յոլա գնացեք, տեսնենք գլխներիս ինչ կգա»:

Մինչդեռ հայտնի է, որ առողջ ժողովուրդ ունենալու համար, առողջ պետք է պահել աճող սերունդը: Իզուր չէ, որ բժիշկներն ասում են՝ բոլոր հիվանդությունները կոդավորված են, նրանք գլուխ են բարձրացնում դժվար պայմաններից՝ ցրտից, քաղցից կամ անկանոն սնունդից, նյարդային ոչ հավասարակշիռ վիճակից:

Դպրոցների մանկավարժական կոլեկտիվները, աշակերտների ծնողները պետք է իրենց վրա վերցնեն կաթսայատների կառուցման ու շահագործման ծախսերը: Բայց դա չի նշանակում, թե կրթության մարմինները, քաղաքապետարանն ու թաղային մարմինները մի կողմ քաշված պետք է ասեն. հարգելի դպրոց, քո գլխի ճարը ինքդ տես:

Հիշենք այս ամենն ու պահպանենք երեխաներին:

Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու

Արբանյակային հետաքննություններ...

⇨4 բուգոդոնոսոր թագավորի առասպելական քաղաքի վերականգնման աշխատանքներին: Հին քաղաքի տարածքում Հուսեյնի շինարարները վերականգնեցին թագավորի նախկին պալատը, մի քանի տաճարներ, հելլենական թատրոնը և քաղաքի սկզբնական դարպասներից մի քանիսը, ստեղծվեցին նաև մի քանի թանգարաններ և ժամանակակից բազմաթիվ կառույցներ: Այդ վերակառուցողական աշխատանքների մեծ մասը կատարվեցին իրանա-իրաքյան պատերազմի տարիներին, որը տևեց 8 տարի: Պատերազմի ավարտին՝ 1988 թ. Հուսեյնը կառուցեց մոտ 100 մետր բարձրությամբ 3 արհեստական բլուր, կարծես պարսպապատելով հին Բաբելոնի տարածքը:



Ծոցի պատեազմի ավարտից հետո, վերակառուցված հին պալատի կողքին, դարձյալ բլրի վրա, Հուսեյնը կառուցեց մեկ ուրիշ հրաշակերտ պալատ, որը բարձունքից նայում էր ցած՝ հին Բաբելոնի նախկին տիրակալի պալատին, ջանալով ցույց տալ իր մեծությունը նախկինի նկատմամբ: Հետազոտողները ենթադրում են, որ Հուսեյնը գիտակցաբար իշխանության իր տարիները ներկայացնում էր որպես բաբելոնյան նախկին կայսրության վերածննդի շրջան, նպատակ ունենալով ընդարձակել իր ազդեցության ոլորտը Իրաքի սահմաններից դուրս: Հայտնի է, որ Նաբուգոդոնոսորը բազմաթիվ արշավանքներ է ձեռնարկել, նվաճել ուրիշ երկրներ, ստրկացրել շատ ցեղերի: Մեր օրերի բռնապետը երազում էր ստեղծել մի միացյալ Արաբական կայսրություն, որը կտարածվեր Պարսից ծոցից մինչև Միջերկրականի ափերը: Այդ մասին են խոսում 1987-88 թվականներին Բաղդադում կայացած Բաբելոնյան փառատոնները, որոնք ցայտուն կերպով դրսևորեցին նրա ամբիցիոզ նկրտումները դասվելու Նաբուգոդոնոսորի կողքին և նույնիսկ նրանից ավելի բարձր:

Փառատոնի պաշտոնական նյութերում, ինչպես նաև նկարների և հուշանվերների վրա դրոշմված են Բաբելոնի տիրակալի և Սադամի պատկերները: Այս բոլորը պարզորոշ կերպով խոսում է Հուսեյնի փառասիրական անսահման ձգտումների մասին:

Բլրի հենց հարավային մասում է գտնվում հյուրերի ընդունելությունների համալիրը, որը կառուցվել է մինչև Նաբուգոդոնոսորի պալատի և արհեստական բլուրների շինարարությունը: 1987 թ. փառատոնը տեղի ունեցավ հենց այդ համալիրում և վերակառուցված ավերակների վրա: Այդ նորաստեղծ արհեստական լճերը մի նոր շուք են հաղորդում հրաշակերտ կառույցներին: Պատերազմից առաջ արդեն ավարտվել էին հյուսիսային բլրի վրա կառուցվող պալատի աշխատանքները, սակայն մեկ ուրիշ պալատային համալիրի շինարարական աշխատանքները, որը պիտի խոյանար մյուս երկու բլուրների վրա, հասկանալի պատճառներով արդեն էլ չսկսվեցին: Հուսեյնը մտադիր էր կառուցել նաև մեկ ուրիշ հրաշակերտ պալատ Ա-ռևելյան բլրի վրա, մի խումբ արհեստական լճերի մոտակայքում, իսկ 3 բլուրները պետք է օղակաձև շրջապատեին ամբողջ հին Բաբելոնը: Իր մշտական բնակության համար նա նույնպես մտադիր էր կառուցել մի մեծ պալատային համալիր, որը հետագայում իր մեջ կընդգրկեր ամբողջ Բաբելոնը: Այն վիթխարի շինարարական աշխատանքները, որ իրագործվեցին Հուսեյնի իշխանության տարիներին, ներառյալ իր հրաշակերտ պալատը, որը վերևից նայում է ցած՝ Նաբուգոդոնոսորի պալատին, արհեստական լճերի և ջրանցքի կառուցումը, որոնք կյանքի կոչեցին չորացած հողերը և հին քաղաքի շրջափակելը երեք բլուրներով ցույց են տալիս, որ նա «սեփականացրել» է հին Բաբելոնի տարածքը և նրա սիմվոլները իր իսկ սեփական անձը փառաբանելու և իրեն հին աշխարհի կայսրների շարքը դասելու նպատակով:

«Իմաջինգ Նոթես» («Նկարների մեկնաբանություն») անգլիական հանդեսից թարգմանեց
Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

Մեր մեկնաբանությունը

Իհարկե, եթե արբանյակային նկարահանումների ողջ ցանկը հրապարակվի, կպարզվի, որ աշխարհի գերտերությունը հսկում ու նկարահանում է ոչ միայն Սադամ Հուսեյնին, այլև ցանկացած երկիր ու ղեկավարի և, բնականաբար, շատ բան կարող է պատմել իր «հսկողության» տակ ապրող մոլորակի մասին: Միայն մի հարց, իրաքյան միջուկային զենքի մասին լուրը, մի՞թե նկարահանումների սխալմունքն էր, թե քաղաքական խաղ, քանզի ժողովուրդներին, առաջին հերթին ամերիկացի դյուրահավատ ժողովրդին թյուրիմացության մեջ գցելու համար, շատ բան պետք չէ, բավական է հրապարակավ հայտարարել, թե «մենք ամենաուժեղն ենք, ամենահզորը»՝ և ամերիկացի քաղքենու սիրտը հպարտությունից «կպայթի»: Այս անգամ պայթեցին ռումբերը, զոհվեցին հազարավոր մարդիկ ու հետո պարզվեց, որ Իրաքը, այնուամենայնիվ ոչ միջուկային զենք ուներ, ոչ էլ ծրագիր: Բայց այդ արդյունքից գոհ է ամերիկյան պրեզիդենտը. Իրաքի վիճակում չհայտնվելու վախից, «միջուկային ծրագրից» հրաժարվեցին Լիվիան, Սիրիան, Հյուսիսային Կորեան, նույնիսկ Իրանը: Այսպիսին է միջազգային իրավունքը՝ ամերիկացին իր անվտանգության համա՞ր իրավունք ունի գրավել այլ մոլորակներ, այնտեղ-այստեղ տեղադրել միջուկային և ցանկացած այլ զենք և իրավունք է վերապահում իրեն՝ ռմբակոծել, գրավել ցանկացած երկիր, իր մոդելի մեջ տեղավորել ցանկացած երկրի ղեկավարին:

Միկրոկալկուլյատորները, միկրոհեռախոսները արդեն ոչ միայն գործարարների, այլև նույնիսկ դպրոցականների ձեռքի պարագաներն են: Հաճախ զարմանք է պատճառում, թե այդ փոքրիկ սարքերում ինչպես են տեղավորվում հաշվիչներ, հիշողության սարքեր, բարձրախոսներ: Բայց քչերը գիտեն, որ այդ փոքրիկ հրաշքները արտադրվում են հսկա արտադրամասերում, որոնք հազարավոր թելերով իրար կապված սարքեր են, խելացի, ինքնակառավարվող ապարատներ, որոնց կյանք է տվել հազարավոր գիտնականների, բանվորների համատեղ աշխատանքը:



Վավերագրության ճշմարտության լեզվով

Դատապարտելով Խորհրդային Միությունում թույլ տրված սխալները և հանցագործությունները, այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ եթե չլիներ 1941-1945 թթ. պատերազմում տարած հաղթանակը ֆաշիստական Գերմանիայի դեմ, ներկայումս հողագնդում չէին լինի ոչ ազգեր, ոչ ազգային պետություններ: Այդ հաղթանակից հետո խորհրդային երկրի հեղինակությունը, ինչպես երբեք, բարձրացել էր, ստեղծվել էին բոլոր բարենպաստ պայմանները նրա տնտեսական, սոցիալական, դեմոկրատական, օրենսդրական, իրավական վերափոխումների համար: Իրոք, այդ հզոր պետությունը կարող էր դառնալ աշխարհի համար չափանիշ երկիր: Դրան էին պարատդրում առաջավոր հումանիստական գաղափարախոսությունը, երկրով տարածված աշխատանքային խանդավառությունը, հայրենասիրությունը, այդ երկրի ազատության համար մոտ երեսուն միլիոն զոհված մարդկանց հիշատակը:

Սակայն որքան էլ դա ցավալի է, պետք է ընդունել, որ երկրի ղեկավար ուժը՝ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցությունը ու, հատկապես նրա ղեկավար մասը, կորցրեց իր որակական հատկանիշները և բարոյական չափանիշները, չկարողացավ հաղթահարել իր խոսքի (գաղափարախոսության) և գործի (վարվելակերպի) միջև առաջացած հակասությունները, այլասերվեց, ինչը հանգեցրեց պետության կործանմանը: Իմ հասակակիցների թվում չի կարող գտնվել մի կատարյալ, առաքինի մարդ, օժտված իրադարձությունների նկատմամբ վերլուծական մտքի կարողություններով, որ չընդունի այդ ճշմարտությունը: Այդ մասին մենք հիշեցնում ենք այն մտահոգությամբ, որ երկրի ղեկավարը, լինի անհատ առանձին մարդ, թե կոլեկտիվ ուժ, հայրենաշահ խնդիրներին պիտի մնա հավատարիմ, դրանք չզոհաբերի անձնական շահերին:



Կոմունիստական կուսակցության որակական հատկանիշների կորստի, նրա ղեկավարության կողմից ինքնաքննադատության բացակայության, սեփական սխալները ընդունելու և դրանց ուղղելու անկարողությունների մասին է վկայում Ղարաբաղի հարցի, նրա նկատմամբ ղեկավարության դիրքը, ինչը հանդիսացավ այդ ղեկավար ուժ կոչվածի՝ նեխածության գագաթնակետը:

Այդ մասին առավել արժեք են ներկայացնում ղարաբաղյան դեպքերի անմիջական մասնակից-ականատեսի վկայությունները՝ համեմված վավերագրական ճշմարտություններով: Խոսքը Ղարաբաղ և Ադրբեջան ուղարկված ԽՍՀՄ ՆԳՄ զորախմբի օպերատիվ-քննչական շտաբի պետ փոխգնդապետ Վիկտոր Վլադիմիրովիչ Կռովոպուսկովի (հրատարակչություն՝ Դոնի Ռոստով) և «Խռովահույզ Ղարաբաղ» գրքի մասին է:

Այն շարադրված է հեղինակի օրագրերի, պաշտոնական զեկուցագրերի և այլ գրությունների հիման վրա, վերնագրում նշելով՝ «ԽՍՀՄ ՆԳՄ սպայի օրագրից»: Հեղինակին գոհունակություն է պատճառել, որ այդ նյութերը չեն ոչնչացվել, պահպանվել են և որոնք անձամբ իր ժամանակների համար «ստույգ և արժանահավատ վկայություններ են»: (Ենթադրելով, որ Հայաստանում շատ քչերին է ծանոթ հիշատակված աշխատությունը, դրա պակասի հետևանքով, ուստի անհրաժեշտ կհամարենք հաճախակի անդրադառնալ գրքի շարադրանքին): Տեղի ունեցող իրադարձությունների մեջ այնքան էլ դյուրին չի եղել «պատկերացումներ կազմելու, գլուխ հանելու համար, երբ հարկավոր էր որոշումներ ընդունել ինքնուրույնաբար, անհապաղ, հաճախ էլ ոչ ըստ կանոնադրության ու հրամանատարների կարգադրությունների, քանի որ ուշացման գինը ինչ որ մեկի կյանքն էր հաճախ: Այդ պայմաններում ստիպված էինք գործել հիմնվելով սեփական խղճի և ինտուիցիայի հրամանով, ինչը իրենց չեն սովորեցրել»:

Խարդախությունների ոստայնով պատած ՆԳՄ աշխատանքներում հնարավոր չի եղել ապահովելու մարդկանց անվտանգությունը և իրավունքները արտակարգ իրավիճակներում, նրանց կյանքի ազատ դրսևորումները և սոցիալ-տնտեսական գործունեությունը: Ղարաբաղում մեզանից շատերին պարզ դարձավ, որ ցանկանում են մեր ձեռքերով կատարել անիրավ գործեր»: Եվ ինչ խոսք,- հավելում է հեղինակը,- «կային մարդիկ, որոնք շահագրգռված էին, որ մենք չըմբռնենք կատարվող գործերի իմաստը, ինչի մեջ մեզ ստիպել էին մասնակցել»:

(շարունակելի)

Հրանտ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Աշխատանքի և պատերազմի վետերան

ՆՈՐ ԳՐՔԵՐ

Անգլերեն լույս է տեսել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանի «Լեզվի համընդհանուր տեսություն» աշխատությունը

Վերջերս Կանադայի Մագիլ համալսարանի պրոֆեսոր Դորա Սաքայանի նախաձեռնությամբ ակադեմիկոս, հայերենագիտության մեծ ռահվիրա Գևորգ Ջահուկյանի «Լեզվի համընդհանուր տեսություն» գիրքը հրատարակվել է անգլերեն:

Ջահուկյանի անունը անհայտ չէ համաշխարհային լեզվաբանությանը, բայց նրա մտքերի, նոր մեթոդների հանրհայտության համար խիստ անհրաժեշտ է գիտնականի աշխատությունների թարգմանությունը: Դորա Սաքայանը ընդամենը մի գիրք է հանձնել համաշխարհային լեզվաբանության քննությանը, այնինչ գիտնականի բազում աշխատություններ կան, որ անհասանելի են օտարներին. չկա այնպիսի բնագավառ, այնպիսի խնդիր հայ լեզվաբանության մեջ, որին ակադեմիկոսն անդրադարձած չլինի: Հիրավի երևույթ է նրա «Լեզվի համընդհանուր տեսությունը», որը նաև նոր խոսք է ընդհանուր լեզվաբանության ասպարեզում: Այս գիրքը ստեղծվել է տիպաբանական մոտեցմամբ, ընդհանրական տեսություն է լեզվի մասին ընդհանրապես, այն ոչ թե մեկ առանձին լեզվի մասին գրված տեսություն է, այլ անհատական լեզուներից վեր, բոլոր լեզուների վրա տարածվող համընդհանուր համակարգ: Ընդհանրական տեսություն, լեզվական անհակասական համակարգ ստեղծելու գաղափարը գիտնականին մտահոգել է երկար ժամանակ, սկսած ուսանողական տարիներից՝ մտահղացել է այս գիրքը, որը սակայն լույս աշխահ է եկել շատ ուշ, այն ժամանակ, երբ գիտնականն արդեն ակադեմիկոսի կոչում ուներ և հանրահայտ անուն: «Լեզվի համընդհանուր տեսություն»-ը բաղկացած է երկու մասից, Ծանոթագրությունից և Հավելվածից:

Գ. Ջահուկյանին առաջարկ է եղել նաև գիրքը ֆրանսերեն լեզվով թարգմանելու մասին: Այդ աշխատանքներով խոստացել է զբաղվել Սորբոնի համալսարանի հայագիտության ամբիոնը:

Հայրենի երկիր, մարդիկ, գործեր

Լույս է տեսել լրագրող, մեր մշտական թղթակից Հենրիկ Խառատյանի «Հայրենի երկիր, հարազատ մարդիկ, հայրենանվեր գործեր» գիրքը: Ժողովածուն լրագրող հեղինակի մամուլի տարբեր մարմիններում, այդ թվում և մեր՝ «Գիտություն» և «Նպատակ» թերթերում տպագրված ակնարկների, հոդվածների ժողովածու է:
Ստորև գրքի նախաբանը:

«Աստծո դիմաց մարդը մեծագույն գանձ է, եթե մարդ գանձը չըլլա, մյուս գանձերը չեն ստեղծվի»:

Արամ Ա կաթողիկոս

Երկու խոսք

Հարգելի՛ ընթերցող, քո ուշադրությանն եմ արժանացնում պատմական աղբյուրներում, պարբերականներում և արխիվներում պահպանված մեր հայ երախտավորների կատարած ուշադրության արժանի գործերի, սակավ հայտնի նյութերի հետազոտությանն ու հրապարակմանը նվիրված իմ աշխատանքների ժողովածուն: Նպատակս է ամփոփ ձևով ներկայացնել Հայաստանի առանձին բնակավայրերում տեղի ունեցած որոշ իրադարձությունների, անցուդարձերի, մասնակից անձանց կատարած նվիրական գործերը:



Հաճախակի հիշատակվում է, թե հայրենիքը սկիզբ է առնում օջախից, ծննդավայրից, որի հետ չհամաձայնվել չի կարելի: Այս պարագայում, կարծում ենք, յուրաքանչյուրի մոտ ցանկություն է առաջանում հաղորդակից լինել հարազատ ծննդավայրի, տարածաշրջանի պատմական անցյալին, իմանալ լավագույն օրինակները, դրսևորել սեփական ընկալումն ու գնահատումը, և, վերջապես, ընդօրինակել արժանին:

Ժողովածուն բաժանված է առանձին մասերի, որտեղ ներկայացված նյութերը հրապարակվել են հանրապետության հեղինակավոր պարբերականներում (ԳԱԱ «Լրաբեր», «Էջմիածին», «Պայքար» ամսագրերում և «Հայաստանի Հանրապետություն», «Ազգ», «Հայ գինվոր », «Կանչ», «Գիտություն», «Հայաստան», «Դիլիջան» և այլն) և ընդգրկում են կրթության, լուսավորության, մշակույթի, քրիստոնեության հաստատման, պատմական արժեքների վերականգնման, հոգևոր այրերի գործունեության, պատերազմում ժողովրդի հերոսական մասնակցության և այլ հարցերի վերաբերյալ նյութեր:

Գրքում առանձին տեղ է հատկացվել ծննդավայրիս՝ Դիլիջան քաղաքի պատմական անցյալին: Հոդվածներ ու հետազոտական նյութեր են նվիրվել հարակից բնակավայրերի պատմական անցյալին, տարածաշրջանի բնական հարստությունների առկայության, դրանց օգտագործման անհրաժեշտության և ժամանակի սոցիալ-տնտեսական հարցերին:

Հենրիկ ԽԱՌԱՏՅԱՆ
Պատերազմի և աշխատանքի վետերան

Լեռնահանքային արդյունաբերության հիմնախնդիրները

ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել Հ. Ավագյանի «Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության զարգացման հիմնախնդիրները» գիրքը:

Հայաստանը շատ հարուստ է որոշակի տեսակների մետաղական և ոչ մետաղական օգտակար հանածոներով: Օգտակար հանածոներով Հայաստանը ոչ միայն կարող է բավարարել իր սեփական պահանջները, այլև խոշոր քանակներով արտահանել այլ երկրներ: Գրքում քննարկվում են մետաղական օգտակար հանածոների հանքաքարերի հեռանկարների հարցերը: Ըստ առանձին հանքավայրերի ու հանքաերևակումների տրված են դրանց ընդերքի հարստությունների պաշարներն ու կանխատեսումային ռեսուրսները, դրանց արժեքային գնահատականները, շահագործման ընթացքում տեղի ունեցող անհիմն (գերնորմատիվային) կորուստները, դրանց առաջացման պատճառներն ու վերացման ուղիները, լեռնահանքային արդյունաբերության արդյունավետության բարձրացման հնարավոր ուղիները, մետալուրգիական գործարանների կառուցման անհրաժեշտության հիմնավորումները և այլն:

Հանրահայտ է, որ արդյունաբերության որոշակի ճյուղերում (միջուկային ռեակտորների աշխատանքում, կիսահաղորդիչային էլեկտրոնիկայում և այլն) կիրառվում են գերզտված ու գերմաքրված տարրեր, որոնց գները միջազգային շուկայում հարյուրապատիկ ու հազարապատիկ ավելի թանկ են, քան դրանց չմաքրված տեսակները: Գրքում ամենուրեք խորհուրդներ են հնչում Հայաստանում մետալուրգիական գործարաններ կառուցել՝ կորզվող տարրերի որոշակի մասը որոշակի քանակներով զտելու և մաքրելու հնարավորություններով հանդերձ:

Գրքի տպագրությանը եռանդուն աջակցության համար հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում ակադեմիկոսներ Վլադիմիր Խոջաբեկյանին, Հրանտ Ավետիսյանին և Սերգեյ Գրիգորյանին:

Գիրքը խմբագրելու և սրբագրելու գործում իրենց ջանքերն են ներդրել թեմատիկ խմբի աշխատակից, հայոց լեզվի և գրականության մասնագետ Մարլենա Բաբայանը:

Հեղինակը հույս է հայտնում, որ հայ գործարարները Հայաստանի օգտակար հանածոների հանքավայրերը շահագործելիս կդրսևորեն իմաստություն, կհետևեն գրքում բերված խորհուրդներին, կկառուցեն ժամանակակից մետալուրգիական գործարաններ, հանքավայրերը կշահագործեն համալիր՝ լավագույնս կորզելով բոլոր օգտակար տարրերը հնարավորինս քիչ թափոններով ու մեծ արդյունավետությամբ, համաշխարհային շուկա կմտնեն զտված ու մաքրված վերջնարտադրանքներով, ավելի ևս կհարստանան իրենք և կհարստացնեն հայրենիքը:

Գիրքը տպագրվել է ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արթուր Բաղդասարյանի հովանավորությամբ:

Կենսաահաբեկչությունը այսօրվա ռեալ վտանգներից մեկն է, քանզի ահաբեկիչ-մահապարտները հնարավորության դեպքում կարող են ամեն քայլի դիմել: Ահա թե ինչու գիտությունը մշակել է նման վտանգի դեմ կռվող, վնասազերծող մասնագետի հատուկ արտահագուստ:

Իսկ ահա այստեղ արտահագուստը չօգնեց. բժիշկներն են կռվում կյանքի համար:



Մաքուր օդ, մաքուր ջուր... Ալյասկայի այս տեսարանը հրապուրում, գրավում է մարդուն:

Գրիգոր ՆԱՐԵԿԱՑԻ

«Մատյան ողբերգո-երգության»

հատված

Քանզի մարդկանցից այն ո՛վ մեղանչեց, և չզղջաց,
Ո՛վ ապականվեց՝ և չամաչեց.
Ո՛վ գարշելի դարձավ՝ և չպատկառեց.
Ո՛վ սխալվեց՝ և չապաշավեց.
Ո՛վ կործանվեց՝ և չհեծեծեց.
Ո՛վ գայթակղվեց՝ և չտրջացավ.
Ո՛վ հաղթվեց՝ և իր բերանը չփակեց.
Ո՛վ խաբվեց՝ և հոգոց չհանեց.
Ո՛վ ճաշակեց լեղի՝ և չդառնացավ.
Ո՛վ ընկավ բարձրից՝ ու վեր չցատկեց.
Ո՛վ կորցրեց մեծությունը՝ և չաշխարեց,
Ո՛վ զրկվեց երանությունից՝ և չլացեց.
Ո՛վ կողոպտվեց փառքի շնորհներից՝ ու չողբաց.
Ո՛վ ինքն իր դեմ դարձավ վնասակար՝ և իրեն չմեղադրեց.
Ո՛վ մերժվեց Աստծու երեսից՝ և չհառաչեց.
Ո՛վ լսեց Աստծո սպառնալիքներն՝ ու չսոսկաց.
Ո՛վ մի մեղքի դեմ հազար չավաղեց.
Ո՛վ մերկացավ ձմռանը և՝ չսարսռաց.
Ո՛վ գործեց անօրենություն՝ և իր խիղճը չքարկոծեց.
Ո՛վ տեսավ ստրուկին՝ իր մեծության մեջ՝ և չցավեց.
Ո՛վ չարիք գործեց՝ և ինքն իրեն չնզովեց.
Ո՛վ բռնվեց ախտով՝ և իր անձը չպարսավեց.
Ո՛վ ամոթալի գործեր կատարեց՝ և իր մարմինը չձաղկեց.
Ո՛վ ձեռք զարկեց անպատկառ գործի՝ և իր օրը չանիծեց.
Ո՛վ հիշեց գործածները՝ ու չտապացավ.
Ո՛վ մտաբերեց գաղտնիքները՝ և չխորովվեց.
Ո՛վ նկատեց ծածուկները՝ և կորստյան մատ չխնդրեց.
Ո՛վ աներևույթները պատկերացրեց՝ և գլուխը չկախեց.
Ո՛վ հեշտավետ մեղանչումների հետ հնոցի անշեջ բոցը չխառնեց.
Ո՛վ պագշոտացավ՝ ու չպապակեց.
Ո՛վ իր կամովին գործած չարիքները հիշեց՝ և իր սատակման համար չաղոթեց.
Ո՛վ իր երեսի աղետի տեսքը՝ և անձը վերնայնի բարկության արժանի չհամարեց.
Ո՛վ աչքի առջև բերեց գլխավոր մեղքերից մեկը՝ և մահացու զենքով չխոցվեց.
Ո՛վ խայտառակություններն հիշեց՝ և վհատության ողբաձայն վայեր չհյուսեց.
Ո՛վ արքայական իր գահից զրկվեց՝ և կարկամելով՝ վայր չգլորվեց.
Ո՛վ պսակի տեղ հող դրեց գլխին՝ և հոգով չարաչար չմահացավ.
Ո՛վ պայծառ պատմուճանի տեղ քուրձ հագավ՝ և չտխրեց.
Ո՛վ իր կյանքը կորցրեց՝ և չերկնեց արյուն-արտասուք.
Ո՛վ լուսեղեն վերարկուի փոխարեն խավար հագավ՝ և չնվաղեց.
Ո՛վ իր սիրելու սուգի վրա չքառամեց:-
Սրանք են ահա ճշգրտագույն կերպարանքը հանդիմանության արժանի մեղապարտիս:

Գրանցվել է

Հայտնի է դարձել, որ Ռուսաստանի Դաշնության Արդարադատության նախարարությունը օրերս պաշտոնապես գրանցել է «Միջազգային համահայկական կոնգրես» կազմակերպությունը, որի հիմնադիր համագումարը կայացավ 2003 թվականի հոկտեմբերին, Մոսկվայում: Կազմակերպության հիմնադիր համագումարը նախաձեռնվել և գումարվել էր «Ռուսաստանի հայերի միության» պրեզիդենտ Արա Աբրահամյանի նախագահությամբ:

Հիշեցնենք, որ հիմնադիր համագումարի աշխատանքներին ներկա էին բազմաթիվ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ պրեզիդենտ Ռոբերտ Քոչարյանը և Ռուսաստանի Դաշնության պրեզիդենտ Վլադիմիր Պուտինը:

«ՄԱՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ»-1000

Նարեկացին՝ Փարիզում

Արդեն հազար տարի է, ինչ անմահ Գրիգոր Նարեկացին իր «Մատյան ողբերգության» գրքով ուղեկցում է հայությանը նրա կյանքի ուրախ ու տխուր, դյուրին ու դժվարին ժամանակներում: Նրա «Մատյան ողբերգության» երկը մշտապես խաղաղություն է հաղորդել հայ մարդու հոգուն, թեթևացրել նրա սրտին իջած ծանրությունը, պարգևել նրան գեղարվեստական անասելի բավականություն ու հրճվանք, մերթ էլ հրաշագործ սպեղանու նման բուժել նրա մարմնական ցավերը: Ահա թե ինչու 2003 թվականին Հայաստանի Հանրապետության շատ վայրերում, ուսումնական և գիտահետազոտական հաստատություններում նշվեց «Մատյանի» ստեղծման 1000-ամյակը: Տեղի ունեցան հոբելյանական միջոցառումներ, միջազգային գիտական նստաշրջաններ, կառավարական հանդիսավոր երեկույթ:

Եվ ահա Գրիգոր Նարեկացու ստեղծագործությանը նվիրված միջազգային գիտաժողով տեղի ունեցավ նաև Փարիզում: Փարիզյան գիտաժողովը կազմակերպել էին Ֆրանսիայի Արևելյան լեզուների և քաղաքակրթության ազգային ինստիտուտը (INALCO) և Փարիզի հայության հասարակական միությունը՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի ու երիտասարդության նախարարության և Փարիզի Ժորժ Դյումեզիլի անվան Կովկասյան ուսումնասիրությունների կենտրոնի նյութական օժանդակությամբ:

Նստաշրջանը կայացավ Արևելյան լեզուների և քաղաքակրթության ազգային ինստիտուտի դահլիճում՝ փարիզյան մտավորական լայն հասարակայնության դրսևորած նկատելի հետաքրքրության մթնոլորտում: Աշխատանքային երկու օրերին տեղի ունեցան հինգ նիստեր, որոնց անխափան ընթացքը կազմակերպչական առումով ապահովում էր հիշյալ ինստիտուտի հայագիտական ուսումնասիրությունների բաժանմունքի տնօրեն պրոֆ. Անահիտ Տոնապետյանը:

Գիտաժողովը ողջույնի խոսքով բացեց Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Էդվարդ Նալբանդյանը, որը ըստ ամենայնի կարևորեց Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի համամարդկային բովանդակությունը: Հայաստանի Հանրապետության դեսպանը նաև նախագահեց առաջին նիստի աշխատանքները:

Նստաշրջանին ընթերցվեցին 16 զեկուցում, որոնցից տասնմեկի հեղինակները Հայաստանի գիտահետազոտական և բուհական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ էին՝ համաշխարհային հայագիտությանը հայտնի անձինք: Հետազոտական ուշագրավ արդյունքներով հանդես եկան եվրոպացի նշանավոր հայագետներ Ժան-Պիեռ Մահեն, Գրիգոր Պըլտյանը, Արամ Մարտիրոսյանը (Ֆրանսիա, Փարիզ), Յոզ Վայթենբերգը, Հրաչյա Մարտիրոսյանը (Նիդերլանդներ, Լեյդեն): Գիտաժողովի աշխատանքներին իր նպաստը բերեց նաև Օքսֆորդի համալսարանի պրոֆեսոր, երիտասարդ շնորհալի հայագետ Թեո Վան Լինքը:

Հայաստանի հայագետները ներկայացնում էին հինգ գիտական հաստատություններ և հանդես էին գալիս հետևյալ կազմով: Սերգեյ Սարինյան, Ազատ Եղիազարյան, Վարագ Ներսիսյան, Աննա Արևշատյան (ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա), Ծովինար Չալոյան-Հակոբյան, Արաքսի Սարյան, Միհր Նավուան (Կոմիտասի անվան կոնսերվատորիա), Հրաչյա Թամրազյան, Լիլիթ Զաքարյան (Մաշտոցի անվան Մատենադարան), Գառնիկ Անանյան (Երևանի պետհամալսարան) և Ալիտա Դոլուխանյան (Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարան):

Ընդհանուր գծերով ասած՝ թե՛ եվրոպայի և թե՛ հայաստանյան գիտնականների զեկուցումները փորձում էին թարմ հայացքով և նորովի մոտեցմամբ մեկնաբանել Գրիգոր Նարեկացու «Մատյանի» և մյուս գործերի բովանդակային ու լեզվաոճական առանձնահատկությունները, ազգային և հունաբյուզանդական մշակութային ավանդների հետ ունեցած առնչությունները, հայ հոգևոր մեղեդային երաժշտության ձևավորման ու զարգացման գործում նրա կատարած ներդրումը, աշխարհահայացքը, թողած ժառանգության մնայուն արժեքն ու միջնադարյան գեղանկարչական արձագանքները:

Հայաստանի գիտնականները ընդունելություն ունեցան Հայաստանի Հանրապետության դեսպանատանը, հյուրընկալվեցին վաստակաշատ հայագետ, երջանկահիշատակ Սիրարփի Տեր-Ներսիսյանի հիմնադրամի նախագահ Միշել Նաֆիլյանի հարկի տակ, այցելեցին Փարիզի աշխարհահռչակ թանգարաններն ու պատկերասրահները:



Նմանություն

Ընտանի կենդանիները, հատկապես շները, համենայնդեպս նրանց 25 տոկոսը տարիների ընթացքում նմանվում են տերերին: Ահա այս «Տուտուն» էլ իր տիրոջ նման փքվել, գնդլիկ է դարձել: Ասես, եթե տերը որոշի նիհարել, ինչ պիտի անի այս փքված շնիկը:

Գիրություն
Գլխավոր խմբագիր՝
Վլադիմիր ՄՈՒՐԱԴՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24դ,
հեռախոս՝ 56-80-14:
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝
448: Ստորագրված է
տպագրության՝ 27.02.2004 թ.
"ГИТУТЮН" ("Наука")
газета НАН РА

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
թերթը հրատարակվում է
հովանավորչական միջոցներով: